## 1. Եղնիկ, դու ո՞ր սարն ես արծել[1]




– Եղնիկ, դու ո՞ր սարն ես արծել:
– Ասիս-Մասիս սարն եմ արծել:
– Եղնիկ, դու ո՞ր ջուրն ես խմել:
– Սառն աղբրի ջուրն եմ խմել:
– Եղնիկ, դու ո՞ր սարն ես քնել:
– Հայոց Անի սարն եմ քնել:
– Եղնիկ դու ո՞ր ծառն ես քերվել:
– Ծառ խնկենի ծառն եմ քերվել:

## 2. Քաշ հարեն հարսանեկան[2]

## / Ակն /




Այ իմ հարստի դստրիկ,
 Ծոցդ էգի (այգի), ծառդ արմաւենի:
Արմաւն քու ծառդ կու լինի,
 Պիլպիլը (սոխակ) քու ճեղդ (ճյուղ) կու թառի:
Քու ծառն ու ճեղդ ոսկի,
 Քու տերև վարդ կու մանի:
Ես քու ծոցուն տէր պիտէի,
 Ճըղերուդ արմաւ քաղէի:

[1] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, Երևան, «Գիտություն» հրատ., 2000, N 56, էջ 70:
[2] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 9, Երևան, «Գիտություն» հրատ., 1999, N 49, էջ 92:

## 3. Մեր տան էտին ծառ սալորի[3]
## / Օվաջըք, Բութանիա /




Մեր տան էտին ծառ սալորի,
Սալորն իյնա չի գլորի.
Քեզ գրկողը չի հալվորի:
– Քա նենե, հարսնուկըդ վո՞ւր է,
– Հարսնուկս էլավ ջուրը գնաց,
Ինկավ ու փարչը կոյրեցավ:
Մի՛ լալ, հարսնուկ, մի՛ հեկեկար,
Օսկի, արծաթ փարչըդ շինիմ,
Վարդ ու ռահան ջուրըդ ժողվիմ:

## 4. Էջմիածնա զորութենով[4]




## 5. Երկնուց գետնուց[5]




---

[3] *Թումաճան Մ.*, ՀԵուԲ, հ. 1, Երևան, “Գիտություն” հրատ., 1972, N 16, էջ 62:
[4] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, Երևան, «Գիտություն» հրատ., 2000, N 51, էջ 67:
[5] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10 , N 52, էջ 67:

## 6. Օրհնե Հիսուս[6]




*Ծառը դրված է սեղանի վրա, սինու մեջ*
Օրհնե Հիսո՛ւս, օրհնե Քրիստո՛ս,
Թագվորահոր օրհնությունով,
Թագվորամոր օրհնությունով,
Հայրապետաց օրհնությունով,
Վարդապետաց օրհնությունով,
Քահանայիդ օրհնությունով:

*Ապա ծառը բարձրացնելով երգում են*
Օրհնյալ ծառը նոր կանգնեցավ,
Խաչն էլ գլխին արդ բազմեցավ,
Քաղցր պտղով զարդարվեցավ,
Անմահության հոտ բուրեցավ,
Սուրբ օրհնություն տարածվեցավ,
Թշնամու սիրտը քաղցրացավ:
Բարի հրամեք, թագավորներ:

Այստեղ թագավորը գլուխ է տալիս երգողներին
Բարի հրամեք, կնքահայրներ

*Գլուխ են տալիս*
Օրհնե Հիսո՛ւս, օրհնե Քրիստո՛ս,

Նույն եղանակով
Այն ո՞վ էր, որ առաջ օրհնեց,
Յուր սուրբ սրտովը նորոգեց,
Ամուսնության կապն հաստատեց,
Աճել ու շատանալ հրամայեց:
– Այն Աստված էր՝ առաջ օրհնեց,
Յուր սուրբ սրտովը նորոգեց,
Ադամ Եվային պսակեց,
Աճել ու շատանալ հրամայեց:
– Պսակտերն ո՞վ եղավ,
Նրանց քավորն ո՞վ եղավ,
Երգող-պարողն  ո՞վ եղավ,
Հարսանիք անողն ո՞վ եղավ:
– Պսակատեր Տերն եղավ
Քավոր՝ Գաբրիելն եղավ,
Երգող-պարող հրեշտակքն եղան,
Հարսնատունը դրախտն եղավ:

[6] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 53, էջ 68:

## 7ա. Ծառ փնջելու պար[7]
## / Արթիկ /




**Տղա.** – Յէս բէրէլ էմ սիրուն ծառը,
Արէ՛ք, աշէծէ՛ք, ա րէ՛ք, աշէծէ՛ք.
Յէս բէրէլ էմ սիրուն ծառը,
Բէրէ՛ք, նըխշէծէ՛ք, բէրէ՛ք, նըխշէծէ՛ք:

**Տղա.** – Ծառ էմ բէրէ կանաչ տէրէվօվ,
Քիշմիշը շարէ՛ք, քիշմիշը շարէ՛ք.
Քիշմիշնէրօվ, ալ վարտէրօվ,
Բէրէ՛ք, զարտըրէ՛ք, բէրէ՛ք, զարտըրէ՛ք:

**Տղա.** – Սիրուն ծառը, ջայէլ ծառը,
Կանանչ ճուղավօր, կանանչ ճուղավօր…
Թաժա հարսըն ու թակավօրը,
Աբրին բախտավօր, աբրին բախտավօր:

**Տղա.** – Դավուլ, զուռնէն, զարգէ՛ք, չալէ՛ք,
Ջայէլնէր կանչէ՛ք, ջայէլնէր կանչէ՛ք.
Սիրուն ծառը կանանչ ճուղօվ
Զարտըրէ՛ք, փնջէ՛ք, զարտըրէ՛ք, փնջէ՛ք:

**Տղա.** – Արէ՛ք, մէրէր, արէ՛ք, քուրէր,
Ձէր խաղը խաղծէ՛ք, ծէր խաղը խաղծէ՛ք,
Ծառը կանանչ, ճյուղէրը շատ,
Ըսէք՝գօվածէ՛ք, ըսէք՝գօվածէ՛ք:

**Աղջիկ.** – Պայծառ լուսին լուսը կուտա
Ծաղգած սարէրին, ծաղգած սարէրին.
Էն սարէրիծ ծիլ ու ծաղիգ
Մէր թակավօրին, մէր թակավօրին:

**Աղջիկ.** – Գառան սուրուն կանանչ լանջին,
Էն լանջէրին, կանանչ լանջէրին.
Էրտա՞նք բէրէնք ծիլ ու ծաղիգ,
Մէր թակավօրին, մէր թակավօրին:

**Աղջիկ.** – Գարնան մօղիգ վարտ ու ծաղիգ
Գըբացվին, գըբացվին.
Բիլբուլնէրի ծէնը
Անուշ գըլըսվին, անուշ գըլըսվին:

**Աղջիկ.** – Ամէն ծառնէր բար էն տալըմ,
Անուշ բար տալըմ.
Էն ծառնէրիծ ծիլ ու ծաղիգ
Մէր թակավօրին, մէր թակավօրին:

**Աղջիկ.** – Էրտամ սարին, ման գամ ձօրին,
Ծիլ ու ծաղիգ մէր թակավօրին, մէր թակավօրին,
Էրտամ հանդին, էրտամ բէրին,
Ծիլ ու ծաղիգ մէր թակավօրին, մէր թակավօրին:

[7] *Лисициан С.* Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 2, Ереван, изд. “Академия”, 1972, N 4, с. 404-407.

Տղա. – Արէ՛ք, տէսէ՛ք փընջած ծառը,
Սիրուն, աննման, սիրուն, աննման…
Թաժա հարսը թակվորի հէդ,
Կապրին հավիդյան, կապրին հավիդյան:

Տղա. –Կարմիր խընձոր, կանանչ ճուղէր,
Մէր փընջած ծառին, մէր փընջած ծառին,
Զարտարած ծառը մէր թակավորին,
Մէր թակավորին, մէր թակավորին:

Աղջիկ. – Հէձան ձիան, հէձան ջօրին,
Ծիլ ու ծաղիգ մէր թակավորին, մէր թակավորին,
Բանձըր սարիծ, էն սարդարիծ.
Ծիլ ու ծաղիգ մէր թակավորին, մէր թակավորին:

## 7բ. Ծառ փնջելու պար*




* Աղջիկների երգած երրորդ տնից սկսած նկատվում են տաղաչափության խախտումներ: Բնագրային 7ա տարբերակում նկատվում են չափագրման խախտումներ (4/8, 3/8), որը բնորոշ չէ պարերգի ժանրին: Ստորև ներկայացված 7բ օրինակը նույն պարերգի մեր չափագրված տարբերակն է, որը, կարծում ենք, առավել համապատասխան է իրական կատարման եղանակին:

## 8. Ուռց շարելու յերգը[8]




## 9. Այն վերի գլխախնձոր[9]




– Այն վերի գըլխախընձոր,
Հարցից, ո՞վ է նա:
– Այն վերի գըլխախընձոր
Մեր թագավորն է.
Այն ձախի քեֆախնձոր… կնքահայրերն են:
Այն ներքի եռախնձոր… հարսնավորն է:
Այն միջի օրհնյալ խնձոր… նոր թագավորն է:
Այն բնի մեկ հատ խնձոր… նոր թագավորն է…

---

8 *Մելիքյան Ս., Գարդաշյան Գ.,* Վանա ժողովրդական յերգեր, Ազգագրական ժողովածու, հ. 2, Յերևան, 1928, N 90, էջ 15:

9 *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 77, էջ 76:

## 10. Նորափեսի ծառի գովքը[10]

### / Կարս /




– Էս խընձոր, գըլխախընձոր, գըլխախընձոր,
Տեսեք, էն ո՞րն է,
– Էս խընձոր, գըլխախընձոր,
Թագավորը ինքն է:
– Էս խընձոր, լիքն ա խընձոր, լիքն ա խընձոր,
Տեսեք էն, էն ո՞րն է:
– Էն խընձոր, կարմիր խընձոր,
Թագւորամերն է:

## 11. Թագվոր, ի՞նչ բերեմ քյո նման[11]

### / Վան /




[10] *Մելիքյան Ս., Տեր-Ղևոնդյան Ա.,* Շիրակի երգեր, հ. 1, Թիֆլիս, 1917, N 112, էջ 53-54:
[11] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 14, Երևան, 2006, «Գիտություն» հրատ., N 6, էջ 43:

Թագվոր, ի՞նչ բերիմ քյո նըման,
Քյո կանաչ արևու նըման, ա՜խ,
Վարդ վը ռեհան, որ կըբացվեր,
Բացվեր քյո արևու նըման:
Թագվոր, ի՞նչ բերեմ քյո նըման,
Քյո կանաչ արևու նըման, ա՜խ,
Ծիրանի ծառ, որ կըծաղկեր,
Ծաղկէ՛ք դուք էլ էնուր նըման:
…
Խնձորի ծառ, որ կըծաղկեր,
…
Դամոնի ծառ, որ կըծաղկեր…[*]

## 12. Թագվոր, ի՞նչ բերեմ քյո նման[12]
## / Վան /




Խաղողի ուռ կոճակ կապէր,
Պնտուկի ծառ պըտուկ կապէր,
Ընկուզի ծառ պըտուկ կապէ…

---

[*] Այս և հաջորդ՝ Ն.Հ. N 12 օրինակի տեքստային լրացումը՝ Հազար ու մի խաղ, II յիսնեակ, N 46, էջ 81-82:
[12] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 14, N 49, էջ 57:

## 13. Կա̈նա̈չա̈ցա̈վ ծառն ի խընգյին[13]

### / Շատախ /




Կա̈նա̈չա̈ցա̈վ ծառն ի խընգյին,
Կա̈նա̈չա̈ցա̈վ ծառ ճօղերօվ՝
Մեր թա̈կյա̈ւոր խէրօվ, մէրօվ:

Կա̈նա̈չա̈ցա̈վ ծառն ի խըձո̈ր,
Կա̈նա̈չա̈ցա̈վ ծառ ճօղերօվ՝
Մեր թա̈կյա̈ւոր ա̈խպէրքյերօվ:

Կա̈նա̈չա̈ցա̈վ ծառն ի ծիրան,
…
Մեր թա̈կյա̈ւոր ուր քյորերօվ:

Կա̈նա̈չա̈ցա̈վ ծառն ի նըշին,
…
Մեր թա̈կյա̈ւոր ընգյերքյերօվ:

Կա̈նա̈չա̈ցա̈վ ծառն ի կօքյօվ,
…
Մեր թա̈կյա̈ւոր ուր քյաւորօվ:

Կա̈նա̈չա̈ցա̈վ ծառն ի կաղնին,
…
Մեր թա̈կյա̈ւոր տընօվ տեղօվ:

[13] Հայրենի երգեր, Երևան, «Նոր գիրք» հրատ., 2007, N 52, էջ 84, 88:

## 14. Գնացեք ասեք[14]




Գնացեք ասեք՝
Թա’գվորաhեր,
Ծառդ գոված է.
Եզ մի խորվու,
Տիկ մի գինի
Ծառ գովողինն է:

Գնացեք ասեք՝
Թա’գվորաքույր,
Ծառդ գոված է.
Ուլ մի խորվու,
Գավ մի գինի
Ծառ գովողինն է:

Գնացեք ասեք՝
Թա’գվորաhարս,
Ծառդ գոված է.
Չորս զույգ գուլպա,
Մի թաշկինակ
Ծառ գովողինն է:

Գնացեք ասեք՝
Թա’գվորաղբեր,
Ծառդ գոված է.
Երկու ճնճղուկ,
Մեկ գարե հաց
Ծառ գովողինն է:

## 15. Թագվոր, ի՞նչ բերեմ քյո նման (հատված)[15]
## / Վան /




14 *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 54, էջ 69:
15 *Թումանճան Մ.,* ՀԵուԲ, հ. 4, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2005, N 117, էջ 135:

Թագվոր, ի՞նչ բերեմ քյո նըման,
Քյո կանաչ արևի նըման,
Վարդ ըվ ռըհան, որ կըբացվեր՝
Բացվեր քյու արև թագվոր:
Ծիրանի ծառ, որ կծաղկի՝
Ծաղկեք դուք էլ ի նոր նըման:
Անուշ ռեհանմ, որ կըհոտի՝
Անուշ հոտեր քյո թագուհին:

## 16. Վարդ, զքե չեմ սիրի[16]
## / Մոկս /




Վա՛րդ, զքե չը՛մ սիրի, վա՜յ, վա՜յ,
Քու մերն էլ փուշ էր, վա՜յ, վա՜յ,
Հազար որ փուշ էր, վա՜յ չալաբի (ավաղ),
Խոտիկ (հոտիկն) անուշ էր:

Ասմի՛ն (հասմիկ), քե չ՛ըմ սիրի,
Կապույտ ծաղիկ էր.
Հազար կապույտ էր (հազար անգամ էլ կապույտ լինի)
Կանաչ խաճին (պուրակ) էր:

Սոսու՛ն, քե չ՛ըմ սիրի,
Սարեր դշուշ էր,
Հազար՝ դշուշ էր,
Խոտիկ անուշ էր:

Սոսու՛ն, քե չ՛ըմ սիրեր,
Ասա (ժեռ) քար կըլիներ (ժեռ քարի վրա կբուսներ)
Հազար՝ ասա էր,
Քընց (քանց) հմեն թազա (նոր) էր:

---

[16] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 59, էջ 71:

## 17. Թագվոր, ի՞նչ բիրեմ քյո նման (հատված)[17]
## / Վան /




Թագվոր, ի՞նչ բիրեմ քյո նըման,
Քյո կանաչ արիվուն նըման,
**Վարդ, ըռահան**, որ կըբացվեր՝
Բացվեր քյո արև, թագավոր:

## 18. Թագվոր, ի՞նչ բերեմ քե նման[18]




Թագվոր, ի՞նչ բերեմ քե նըման,
Քո կանաչ արևն ի նըման,
Անթառամ ծաղիկ, որ կուբացվեր,
Բացվեր արևն ի նըման:

---

[17] *Թումաճան Մ., ՀեուԲ*, հ. 4, N 118, էջ 138:

[18] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 45, էջ 65:

## 19. Առավոտանց կանուխ[19]

## / Բութանիա /




Առավոտանց կանուխ-կանուխ,
Մտնիմ բախճան, քաղեմ աննուխ,
Առավոտանց այս ի՞նչ շաղ է,
Հարսը բախճան վարդ կը քաղեր:
Հարսը դրին դուրսի դուռը
Վրան լցին վարդի ջուրը:

## 20. Թագվոր , ի՞նչ բերիմ քե նման[20]




[19] *Թումաճան Մ.*, ՀեուԲ, հ. 1, N 11, էջ 56:

[20] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 271, էջ 156:

## 21. Թա̈կյա̈ւոր, ի՞նչ պիրիմ քյո̈ւ նըման[21]
## / Շատախ /




Թա̈կյա̈ւոր, ի՞նչ պիրիմ քյո̈ւ նըման,
Քյո̈ւ կանաչ արեվ քեզ նըման,
Պա̈լա̈սան ծաղիկ, ուր կըծաղկէր,
Ծաղկէր քյո̈ւ արեվու նըման:

Թա̈կյա̈ւոր, ի՞նչ պիրիմ քյո̈ւ նըման,
Քյո̈ւ կանաչ արեվ քեզ նըման,
Ա̈նթա̈ռամ ծաղիկ, ուր կըծաղկէր,
Ծաղկէր քյո̈ւ արեվու նըման:

Թա̈կյա̈ւոր, ի՞նչ պիրիմ քյո̈ւ նըման,
Քյո̈ւ կանաչ արեվ քեզ նըման,
Կյընէրպո̈ւկ ծաղիկ, ուր կըծաղկէր,
Ծաղկէր քյո̈ւ արեվու նըման:

## 22. Մեր թագվորին ծաղիկ պիտեր[22]




---

[21] Հայրենի երգեր, N 50, էջ 83:

[22] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 274, էջ 157:

Մեր թագւորին ծաղիկ պիտեր ծաղկունաց,
Ծաղիկն էլ ինչենի՞ պիտեր ծաղկունաց,
Քաղենք բերենք մըր թագվորին,
Օր փաթըթեր ճութն ու տերև հետ ուրանց:

Մեր թագվորին ծաղիկ պիտեր ծաղկունաց,
Ծաղիկն էլ համասփյուռ պիտեր ծաղկունաց,
Քաղենք բերենք մըր թագվորին,
Օր փաթըթեր ճութն ու տերև հետ ուրանց…

## 23. Ծաղիկն էլ ինչենի՞ պիտի[23]




## 24. Թագ գովալ (հատված)[24]
## / Պարսկահայաստան /




[23] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 47, էջ 66:
[24] *Կիրակոսեան Ա.,* Իրանի Սպահանի շրջ. Փերիա գաւ. Ժողովրդական եւ աշուղական երգերի ընտրանի, Փասատենա, (California), «Դրազարկ» հրատ., 1996, N 21, էջ 48-50:

Թագվոր ի՞նչ բերենք քեզ նման,
Քո կանաչ արեւի նման:
Էն արուսեակըն որ կըծագէ,
Ծագել է արեւի նման,
Էն Բալասան ծաղիկըն, որ կը ծաղկէ,
Ծաղկել է արեւի նըման:
Էն ծիթենին, որ կըբացւէ,
Բացւել է արեւի նըման…

## 25. Թագվոր, ի՞նչ բերեմ քեզ նման (հատված)[25]
## / Պարսկահայաստան /




[25] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Լենինական, 1984,N 60:

## 26. Էն արեգակ[26]

## / Խլաթ /




Էն արեգակ, օր կըբացվեր,
Էն անըղնակ, օր կըծաղկեր,
Ծաղկեր քո արևուդ նըման:

Թագվոր, բարով, բարով,
Էն ծընծաղիկ, որ կըբացվեր՝
Բացվեր քո արևուդ նըման:

## 27. Մեր թագվորին ծաղիկ պիտեր[27]




[26] *Թումաճան Մ.,* ՀեուԲ, հ. 4, N 2, էջ 19:

[27] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 46, էջ 65:

| NN | Երգի անվանում | Աղբյուրը | Հրատարակում | Երգի գրառում / Ծննդավայր | Ձայնագրող / Վերծանող | Երգասացի մասին տվյալներ |
|---|---|---|---|---|---|---|
| *1.* | *2.* | *3.* | *4.* | *5.* | *6.* | *7.* |
| 1. | Եղնիկ, դու ո՞ր սարն ես արծել | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 56, էջ 70 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 | Կոմիտաս | — |
| 2. | Քաշ հարեն հարսանեկան | Կոմիտաս. ԵԺ, հ. 9, N 49, էջ 92 | Երևան, 1999, «Գիտություն» | Էջմիածին, 1892 / Ակն | Կոմիտաս | Հովսեփ Ճանիկյան, ծնվ. 1840 թ., Ակն, բանահավաք-ազգագրագետ |
| 3. | Մեր տան էտին ծառ սալորի | Թումաճան Մ., ՀԵուԲ, հ. 1, N 16, էջ 62 | Երևան, 1972, «Գիտություն» | Նյու-Յորք, 1935 / Օվաջըք (Բութանիա) | Միհրան Թումաճան | Մինաս Կարագյոզյան |
| 4. | Էջմիածնա զորութենով | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 51, էջ 67 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / — | Կոմիտաս | — |
| 5. | Երկնուց գետնուց | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 52, էջ 67 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / — | Կոմիտաս | — |
| 6. | Օրհնե Հիսուս | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 53, էջ 68 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / — | Կոմիտաս | — |
| 7. | Ծառ փնջելու պար | Лисициан С., Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 2, N 4, с. 404-407 | Ереван, 1972, изд. АН Арм. ССР | Երևան, 1958 / Արթիկ | Սրբուհի Լիսիցյան / Լևոն Աստվածատրյան | Հերիքնազ Հարտենյան, ծնվ. 1907 թ. Արթիկ – 1971 Թիֆլիս |
| 8. | Ուռց շարելու յերգը | Մելիքյան Ս., Գարդաշյան Գ., Վանա ժողովրդական յերգեր, հ. 2, N 90, էջ 15 | Երևան, 1928, «Հայպետհրատ», | Թիֆլիս, 1917-1918 / Վան | Սպիրիդոն Մելիքյան Գևորգ Գարդաշյան | — |
| 9. | Այն վերի գլխախնձոր | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 77, էջ 76 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / — | Կոմիտաս | — |
| 10. | Նորափեսի ծառի գովքը | Մելիքեան Ս., Տէր-Ղեւոնդեան Ա., Շիրակի երգեր, հ. 1, N 112, էջ 53-54 | Թիֆլիս, 1917, «Քարթլի» տպ., | Շիրակ, 1914 / Կարս | Սպիրիդոն Մելիքյան Անուշաւան Տէր-Ղեւոնդյան | Գևորգ Մարգարյան, ծնվ. Թոմարդաշ գ., |

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | Թագվոր, ի՞նչ բերեմ քյո նման | Կոմիտաս. ԵԺ, հ. 14, N 6, էջ 43 | Երևան, 2006, «Գիտություն» | Էջմիածին, 1909 / Վան | Կոմիտաս | Տիգրան Չիթունի (1881, Վան – 1960, Փարիզ), բանահավաք-ազգագրագետ |
| 12. | Թագվոր, ի՞նչ բերեմ քյո նման | Կոմիտաս. ԵԺ, հ. 14, N 49, էջ 57 | Երևան, 2006, «Գիտություն» | Էջմիածին, 1909 / Վան | Կոմիտաս | Տիգրան Չիթունի (1881, Վան – 1960, Փարիզ), բանահավաք-ազգագրագետ |
| 13. | Կӓնӓչ ӓցӓվ ծառն ի խընգյին | Հայրենի երգեր, N 52, էջ 84; 88 | Երևան, 2007, «Նոր գիրք» | Երևան, 1961 / Շատախ | Ալինա Փահլևանյան | Հայրիկ Մուրադյան, 1905 Շատախ, պատմաբան, անվանի ազգագրագետ |
| 14. | Գնացեք ասեք | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 54, էջ 69 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / — | Կոմիտաս | — |
| 15. | Թագվոր, ի՞նչ բերեմ քյո նման | Թումաճան Մ., ՀԵուԲ, h. 4, N 117, էջ 135 | Երևան, 2005, «Զանգակ-97» | Փարիզ, 1922 / Վան | Միհրան Թումաճան | Տիգրան Չիթունի (1881, Վան – 1960, Փարիզ), բանահավաք-ազգագրագետ |
| 16. | Վարդ, զքե չեմ սիրի | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 59, էջ 71 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / Մոկս | Հակոբ Հարությունյան | Մոկացի Մանուկ (Գևորգյան ճեմարանի ծառա) |
| 17. | Թագվոր, ի՞նչ բիրեմ քյո նման (հատված) | Թումաճան Մ., ՀԵուԲ, h. 4, N 118, էջ 138 | Երևան, 2005, «Զանգակ-97» | Բոստոն, 1936-1937 / Վան | Միհրան Թումաճան | Տիկին Գազանճյան |
| 18. | Թագվոր, ի՞նչ բերեմ քե նման | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 45, էջ 65 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 | Կոմիտաս | — |
| 19. | Առավոտանց կանուխ | Թումաճան Մ., ՀԵուԲ, h. 1, N 11, էջ 56 | Երևան, 1972, «Գիտություն» | Բութանիա, 1935 / Բութանիա | Միհրան Թումաճան | Մամա Քեմիրյան |
| 20. | Թագվոր, ի՞նչ բերեմ քե նման | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 271, էջ 156 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / — | Կոմիտաս | — |
| 21. | Թӓկյӓւոր, ի՞նչ պիրիմ քյӓ՛ նըման | Հայրենի երգեր, N 50, էջ 83 | Երևան, 2007, «Նոր գիրք» | Երևան, 1961 / Շատախ | Ալինա Փահլևանյան | Հայրիկ Մուրադյան, 1905 Շատախ, պատմաբան, անվանի ազգագրագետ |

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
|---|---|---|---|---|---|---|
| 22. | Մեր թագվորին ծաղիկ պիտեր | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 274, էջ 157 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 | Կոմիտաս | — |
| 23. | Ծաղիկն էլ ինչենի՞ պիտի | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 47, էջ 66 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / — | Կոմիտաս | — |
| 24. | Թագ գովալ (հատված) | Կիրակոսեան Ա., Իրանի Սպահանի շրջ. Փերիա գավառի ժողովրդական եւ աշուղական երգերի ընտրանի, N 21, էջ 48-50 | Փասատենա, (California), 1996, «Դրազարկ» | — / Պարսկահայաստան | Անահիտ Կիրակոսյան | Տէր Կարապետ, ծնվել և ապրել է Սանգիբարանում, 1814-1897; 1840 թ. ձեռնադրվել է քահանա |
| 25. | Թագվոր, ի՞նչ բերեմ քեզ նման (հատված) | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱԶ-ի արխիվ, Լենինական (Գյումրի), 1984, N 60 | — | Լենինական (Գյումրի), 1984 / Պարսկահայաստան | Անահիտ Կիրակոսյան / Ղուկաս Պողոսյան | Սամուէլ Զարգարյան, ծնվ. 1916 թ. Սանգիբարանում, հայրենադարձ է եղել 1970-ին |
| 26. | Էն արեգակ | Թումաճան Մ., ՀԵուԲ, հ. 4, N 2, էջ 19 | Երևան, 2005, «Զանգակ-97» | Նյու-Յորք, 1930-1935 / Խլաթ | Միհրան Թումաճան | Անուշ Գրիգորյան, ծնվ. 1903, - 2004 Նյու Ջերսի (ԱՄՆ) |
| 27. | Մեր թագվորին ծաղիկ պիտեր | Կոմիտաս. ԵԺ, հ. 10, N 46, էջ 65 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 | Կոմիտաս | — |

## 1. Թագվորագովք (միջին մաս)[1]
## / Մուշ – Սասուն /




Հա՛ շինեցե՛ք, հա՛ շինեցե՛ք.
Թագվոր ելավ արևելուց,
Մաճ գիտեր ու գիկեր,
Էգավ նստավ դարպասխանեն,
Ձնդրիկ զարգին սուրբ սեղաններ,
Խերն ու պարին մըր թագվորին:

Կացե՛ք, պերե՛ք գումեշ կութնեն,
Գումեշ կութնեն, եզն ախոռեն,
Թ՛իգան գայնին դարբասխանեն,
Ձնդրիկ զարգին սուրբ սեղաններ,
Խերն ու պարին մըր թագվորին:

–Ի՞նչ պիտի մըր թագվորին:
– Շնո՛րք պիտի:
Շնորք պերե՛ք Էջմիածնա,
Շնորք պերե՛ք սըրբ Աղբերկա,
Շնորք պերե՛ք սըրբ Աղբերկա,
Շնորք պերե՛ք Կործալարու Սուրբ Խաչից,
Թ՛իգան գայնին դարպասխանեն ,
Ձնդրիկ զարգին սուրբ սեղաններ,
Խերն ու պարին մըր թագվորին:

Գըռունկ պերե՛ք չոլիցը,
Լագլագ պերե՛ք իր դեխիցը,
Թ՛իգան կովին մըր թագվորին:

Թագվոր էլավ արևելուց,
Մաճ գիտեր ու գիկեր,
Էգավ նստավ սուրբ սեղանին,
Խերն ու բարին մըր թագվորին,
Խաղաղություն ժողովրդին:

Հա՛ շինեցե՛ք, հա՛ շինեցե՛ք.
Թագվոր էլավ մաճ գիտեր,
Գանչեք պերե՛ք թագվորի հերն ու մեր,
Թող գան գայնին դարպասխանեն,
Շընհավորին մըր թագվորին,
Խերն ու պարին իր բսագին,
Խերն ու պարին ժողովուրդին:

Թագվոր էլավ արևելուց,
Մաճ գիտեր ու գիկեր,
Ինք ու թագուհին էգան նստան
Սուրբ սեղանին, գանչին պերին
Թագվորի հեր, թագվորի մեր.
Թ՛իգան գայնին դարպասխանեն,
Խերն ու պարին մըր թագվորին:
Ձառ խնգենին ծաղգեցավ,
Թուփն ու դերիվ պոլորեցավ,
Շատ վրր շեմին ուրախացավ,
Բլբուլ նստավ իր սեղանին,
Երգեց մըր թագվորի խերն ու պարին:

[1] «Թալին» ժողովածու, N 3, էջ 63-71:

## 2. Գացե՛ք, բերե՛ք[2]
/Չմշկածագ/




– Գացե՛ք, բերե՛ք չիֆթ մը տատրակ,
Օր գա գովե մեր թագվորին:
– Գացե՛ք, բերե՛ք չիֆթ մը կաքավ,
Օր գա գովե մեր թագվորին:

– Գացե՛ք, բերե՛ք չիֆթ մը պիլպիլ,
Օր գա գովե մեր թագվորին:
– Գացե՛ք, բերե՛ք չիֆթ մը աղվընիկ,
Օր գա գովե մեր թագվորին:

– Գացե՛ք, ըսե՛ք հորն ու մորը,
Քու սիրելի որդին ծաղկեր:
Ծաղկեր, ծաղկեր, ծաղկեցուցեր,
Ծառն ալ ծաղկով է լեցուցել:

– Ո՞ւր է ասոր հարն ու մարը,
Թող գան՝ տեսնան բոյն ու բուսը:
Էր նըռվինուն ծառն օր ծաղկի,
Ծաղիկն է արեվդ ի նըման:

## 3. Եկէ՛ք, տեսէ՛ք... (Փեսագովանք)[3]
/ Չմշկածագ /




Եկէ՛ք, տեսէ՛ք, ծառն է ծաղկեր,
Ծաղիկն ու արեւն են վըրան,
Արեւն ու ծաղիկն են վըրան:

Երբ նռնենուն ծառն , որ ծաղկի,
Արևդ անոր նըման ծաղկի,
Ծաղիկդ անոր նըման ծաղկի:

Ո՞ւր են էսոր հայն ու մայրը,
Թող գան, տեսնան, թագաւորը
Թող գան, տեսնան, թագաւորը:

Ո՞ւր են էսոր քուրն, աղբարը,
Թող գան, տեսնան, թագաւորը
Թող գան, տեսնան, թագաւորը:

Գացէ՛ք, բերէ՛ք, զոյգ մը տատրակ,
Հետն ըլ բերէ՛ք զոյգ մը սոխակ,
Որ գան, գովեն թագաւորը:

Լուսաւորի՛չ, Հայոց հայրը,
Գովէ՛ էս մեր թագաւորը,
Օրհնէ՛ էս մեր թագաւորը:

---

[2] *Թումաճան Մ.,* Հայրենի երգ ու բան, հ. 2, N 69, էջ 107:
[3] *Աճեմյան Հ.,* Հարսնաճղայ՝ հաւաքածոյ հայ ժողովրդական երգերու Չմշկածագէն եւ շրջաններէն, N 3, էջ 19: Գրի առավ՝ Աւետիս Գ. Մեսումենց:

## 4. Ծառ խնկենի (հատված)[4]

## / Մուշ - Սասուն /




Ծառ խնկենին, որ ծաղկեցավ,
Թուփն ու տերև բոլորեցավ,
Թագվոր աթոռք ուրախացավ,
Խերն ու բարին մըր թագվորին:

Ծառ բալենին, որ ծաղկեցավ,
Թուփն ու տերև բոլորեցավ,
Սուրբ խաչ վըրեն, որ բազմեցավ,
Թագվոր աթոռք ուրախացավ:

Գացե՛ք, բերե՛ք, զկաքավ քարեն,
Թող գա մտնի դարբասխանեն,
Ճնդրիկ զարկենք սուրբ սեղանին,
Խերն ու բարին մըր թագվորին:

Գացե՛ք, բերե՛ք զկռունկ չոլեն,
Թող գա, մտնի դարբասխանեն,
Ճնդրիկ զարկենք սուրբ սեղանեն,
Խերն ու բարին մըր թագվորին:

## 5. Էն դիզան (Կատակ)[5]




– Էն դիզան, պետ-պետ դիզան,
Տեսեք էն ո՞րն է.
– Առյուծներ մոմռալեն,
Տեսեք էն ո՞րն է.
–Կաքավներ կղկղալեն,

– Էն դիզան, բետ-բետ դիզան՝
Գեղի ռեսներն է:
– Առյուծներ մոմռալեն՝
Վարդապետներն է:
– Կաքավներ կղկղալեն՝

---

[4] *Սարգսյան Մ.,* Տաղք հայրենյաց, N 45, էջ 78-79:

[5] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 3, N 24, էջ 63:

Տեսեք էն ո՞րն է.
– Ճնճղներ ճլվլալեն,
Տեսեք էն ո՞րն է.
– Էն արև, երկնուց արև,
Տեսեք էն ո՞րն է.
– Էն լուսին ամպերի մեջ,
Տեսեք էն ո՞րն է.
– Էն միջի հաստագերանն,
Տեսեք էն ո՞րն է.
– Էն քուլա բամբակն է ծակ,
Տեսեք էն ո՞րն է.
– Ցախավել ետև դռան,
Տեսեք էն ո՞րն է.
– Շունն եկավ պարկն ի բերան,
Տեսեք էն ո՞րն է.
– Մուկն էկավ ալրաթաթախ,
Տեսեք էն ո՞րն է.

Էն երիցներն է:
– Ճնճղներ ճլվլալեն՝
Մեր տիրացուքն է:
– Էն արև, երկնուց արև՝
Մեր թագավորն է:
– Էն լուսին ամպերի մեջ՝
Մեր թագուհին է:
– Էն միջի հաստագերանն՝
Թագվորի հերն է:
– Էն քուլա բամբակն է ծակ՝
Թագվորի մերն է:
– Ցախավել ետև դռան՝
Էն մշակներն են:
– Շունն եկավ պարկն ի բերան՝
Էն գեղի գզիրն է:
– Մուկն էկավ ալրաթաթախ՝
Էն ջրաղացպանն է:

## 6. Էն վերի գլխախնձոր[6]




## 7. Այն վերի գլխախնձոր[7]
## /Ռշտունյաց/




– Այն վերի գլխախնձոր,
Հարցից, ո՞վ է նա:
– Այն աջի ձեռախնձոր,
Հարցից, ո՞վ է նա:
– Այն ձախի քեֆախնձոր,
Հարցից, ո՞վ է նա:
– Այն ներքի եռախնձոր,
Հարցից, ո՞վ է նա:
– Այն միջի օրհնյալ խնձոր,
Հարցից, ո՞վ է նա:

– Այն վերի գլխախնձոր՝
Մեր թագավորն է:
– Այն աջի ձեռախնձոր՝
Մեր թագուհին է:
– Այն ձախի քեֆախնձոր՝
Կնքահայրերն են:
– Այն ներքի եռախնձոր՝
Հարսնևորներն են:
– Այն միջի օրհնյալ խնձոր՝
Նոր թագավորն է:

---

6 *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 76, էջ 76:
7 *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 77, էջ 76:

– Այն բնի մեկ հատ խնձոր,
Հարցից, ո՞վ է նա:
– Ծնճղուս ճտվըտալով,
Հարցից, ո՞վ է նա:
– Կաքավը կարկաչելով,
Հարցից, ո՞վ է նա:
– Սոխակը քաղցր երգելով,
Հարցից, ո՞վ է նա:
– Սանամը սըրնչելով,
Հարցից, ո՞վ է նա:
– Արտուտը շվացնելով,
Հարցից, ո՞վ է նա:
– Առաջ ուրախ, հետո տրտում,
Հարցից, ո՞վ է նա:
– Փափսալով տներ քանդող,
Հարցից, ո՞վ է նա:
– Մութ տեղերում թռյնա մտնող,
Հարցից, ո՞վ է նա:
– Ավելը դռան ետև,
Հարցից, ո՞վ է նա:
– Տիկը ուսին, աչքը մսին,
Հարցից, ո՞վ է նա:
– Մուկ'մ եկավ պոչն ալրոտ,
Հարցից, ո՞վ է նա:

– Այն բնի մեկ հատ խնձոր՝
Նոր թագավորն է:
– Ծնճղուս ճտվըտալով՝
Տիրացուներն են:
– Կաքավը կարկաչելով՝
Մեր կնքահայրն է:
– Սոխակը քաղցր երգելով՝
Մեր թագավորն է:
– Սանամը սըրնչելով՝
Մեր թագուհին է:
– Արտուտը շվացնելով՝
Մեր քահանան է:
– Առաջ ուրախ, հետո տրտում՝
Հարսնևորները:
– Փափսալով տներ քանդող՝
Պառավ կնտիք:
– Մութ տեղերում թռյնա մտնող՝
Ազապ տղենին:
– Ավելը դռան ետև՝
Գյուղի գզիրն է:
– Տիկը ուսին, աչքը մսին՝
Ժամակոչն է:
– Մուկ'մ եկավ պոչն ալրոտ,
Ջաղցըպանն է:

## 8. Նա լուս էր[8]
## /Ռշտունյաց/




– Նա լուս էր, ի՞նչ լուս ելավ,
Տեսե՛ք ան ի՞նչ ի:
– Նա ջուխտակ աստղա կշտին,
Տեսե՛ք ան ի՞նչ ի:
– Նա բարձր տեղըրի տեղըր,
Տեսե՛ք ան ի՞նչ ի:
– Նա թռնիր՝ ինչ թուս ու մուր,
Տեսե՛ք ան ի՞նչ ի:
– Ցախավել խետքըն դըրան,
Տեսե՛ք ան ի՞նչ ի:
– Շունն էլավ՝ վա՜, վա՜, վա՜, վա,
Տեսե՛ք ան ի՞նչ ի:
– Կատուն էլավ՝ ճինգի-վի՞նգի,
Տեսե՛ք ան ի՞նչ ի:

– Նա լուս էր, ի՞նչ լուս ելավ՝
Էրեց կտուրն ի:
– Նա ջուխտակ աստղա կշտին՝
Սարկավայքերն ի:
– Նա բարձր տեղըրի տեղըր՝
Խարսի մաղտեն ի:
– Նա թռնիր՝ ինչ թուս ու մուր՝
Մեր տանուտերն ի:
– Ցախավել խետքըն դըրան՝
Հարսի ծամերն ի:
– Շունն էլավ՝ վա՜, վա՜, վա՜, վա՝
Խարսի սկեսուրն ի:
– Կատուն էլավ՝ ճինգի-վի՞նգի՝
Խարսի սկեսրայրն ի:

---
8 *Կոմիտաս*, ԵԺ, հ. 10, N 78, էջ 77:

## 9. Էն դիզան[9]
## /Ալաշկերտ/




## 10. Տեսե՛ք, թե ո՞րն ա (մշեցոց հարսանյաց երգ)[10]




– Ճնճուղներ ծլվլացին,
Տեսե՛ք, թե ո՞րն ա:
– Կատվըներ կվկվացին,
Տեսե՛ք, թե ո՞րն ա:
– Ղառղըռներ ղըղռացին,
Տեսե՛ք, թե ո՞րն ա:
– Սոխակներ ծլվլացին,
Տեսե՛ք, թե ո՞րն ա:

– Ճնճուղներ ծլվլացին՝
Զ'ինի հարսներն են:
– Կատվըներ կվկվացին՝
Զ'ինի համբեքն են:
– Ղառղըռներ ղըղռացին ՝
Զ'ինի պառվըդիքն են:
– Սոխակներ ծլվլացին՝
Խարսն ու փեսեն են:

---

[9] *Հարությունյան Հ.*, «Մանյակ» ժողովածու, N 44, էջ 36:
[10] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱԶ-ի արխիվ, Արթիկ, 1976, N 597:

## 11. Հա՛յ, աղվեսիկ (Հո՛յ, նար, ջանըմը, նար)[11]




[11] *Թումաճան Մ.,* ՀեուԲ, հ. 4, էջ 232-234:

Հո՜յ, նար, ջանըմը նա՜ր,
Հո՜յ, նա՜ր, ջանըմը նարե,
Հո՜յ, նար, ջանըմը նար:

Հո՜յ, աղըվըսիկը, վըսիկը, վըսիկը,
Հո՜յ, նա՜ր, ջանըմը նարե,
Հո՜յ, նար, ջանըմը նար:

Աղվեսըն էկավը վերինը թաղենը,
Հո՜յ…
Մածուն կերավ, թափավը վերենը,
Հո՜յ…
Աղվեսն եկավ դափիկը-մափիկը,
Հո՜յ…
Եկավը, մըտավը մեր կանափիկը,
Հո՜յ…
Աղվեսն նըստե վեր տախտըկին,
Հո՜յ…
Պոչն ի տընկե դեխ տանտիկին,
Հո՜յ, նա՜ր, ջանըմը նարե,
Հո՜յ, նար, ջանըմը նար:

## 12. Մեյ խավմ կեր. Հո՜յ, նար[12]




Աղվեսն իտվեն կըմըկմըկեր:
Աղվեսն ասաց իմ տեղ նեղի,
Խավու ճետեր փորիս տեղի:
Աղվես նստեր վեր տախտակին,
Պոչնի տնկե դեխ տանտըկին:
Աղվեսն իրե տափիկ մափիկ,
Չանց մեր կատուն կանափտիկ,
Խավու ճետերն արագ խորտիկ:

## 13. Աղվես գնաց մտավ ջաղաց[13]




---

[12] *Մելիքյան Ս., Գարդաշյան Գ.,* Վանա ժողովրդական երգեր, հ. 2, N 60, էջ 4:
[13] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 5, N 88, էջ 40:

Աղուէս գընաց, մըտաւ ջաղաց,
Թաթեր վերուց մի բոլ խաղաց:
Հարա՜յ, ա՛ղուէս, պարո՜ն աղուէս,
Աշխարհքի մէջ չը կայ քու պէս:
Մի կոտ ու կէս կորեկ աղաց,
Էն էլ շալակն առաւ, գընաց:

Աղուէս կերաւ գեղի հաւեր,
Փարուէզ տըւաւ վերի կալեր:

Աղուէս պառկե բըրչոտ կողին,
Թաթեր դըրե սիպտակ հողին:

Ասի՛ բըռնենք կուզ ու աղուէս,
Աշունք կարգեմ իմ Օհանէս:

Էլ գին չարաւ յէլ տարուայ պէս, –
Ազապ մընաց իմ Օհանէս:

## 14. Աղվես գնաց[14]




## 15. Աղվես գնաց մտավ ջաղաց[15]




Մի կոտ ու կես կորեկ աղաց,
Էն էլ շալակն առավ գընաց:
Աղվես կերավ գեղի հավեր,
Փարվեզ տըվավ վերի կալեր:

---

[14] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 11, N 55, էջ 40:
[15] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 13, N 157, էջ 143:

## 16. Աղւէսն էկաւ[16]
### /Շիրակ/




Հորես եկաւ մէկ-մէկ ուտի, ո՜յ, ո՜յ, ո՜յ,
Աղուէսն եկաւ լանջիկ-լանջիկ, ո՜յ, ո՜յ,
Ոտերն ունէր կարճիկճկարճիկ, ո՜յ, ո՜յ:
Ո՜յ իմ չալիկ-մալիք, չալմալալիք,
Չալմատորիկ, չալմատպիկ,
Դոշդահոտ, դմպլաճակատ,
Խաշխատպիկ, տռչիկ ջուտեր, ո՜յ, ո՜յ:

Աղուէսն պարկեց աղբատակին, ո՜յ, ո՜յ,
Աչքեր ձգեց չաղ որձագին, ո՜յ, ո՜յ,
Նետով կտամ աչքիտ տակին, ո՜յ, ո՜յ:
Ո՜յ իմ չալիկ-մալիք, չալմալալիք,
…

Էս մի պատուկ զարկած բան եմ, ո՜յ, ո՜յ,
Ելլիմ, երթամ ձագես հանեմ, ո՜յ, ո՜յ,,
Ես էն աղուէսն կու սպանեմ, ո՜յ, ո՜յ:
Ո՜յ իմ չալիկ-մալիք, չալմալալիք,
…

Ա՜յ տղայ, անունդ է Աւագ, ո՜յ, ո՜յ,
Քեզ կուտացնեմ մեղր ու կարագ, ո՜յ, ո՜յ,
Մէկ ջուտ ունիմ իմ յիշատակ, ո՜յ, ո՜յ:
Ո՜յ իմ չալիկ-մալիք, չալմալալիք*,
…

## 17. Աղվես[17]
### /Շատախ/




[16] *Մելիքեան Ս., Տէր-Ղեւոնդեան Ա.*, Շիրակի երգեր, հ. 1, N 115, էջ 55:
* Մատենադարան, Ձեռագիր, N 7695, թերթ՝ 12բ-13ա, 1853:
[17] «Հայրենի երգեր» ժողովածու, N 82, էջ 103, 117:

Աղվես իրի լանջիկ-մանջիկ,
Ոտներ վազան, կարճիկ-մարճիկ:
Վա՜յ, իմ չալիկ, չալմալալիկ,
Չալմատոտիկ, տըմբըլաճակատ,
Խատխատուտիկ, խուրիկ-մուրիկ,
Փամփլիկ ճտեր, վո՜ւյ, վո՜ւյ,
Ձի կերցուցեմ անուշ կուտիկ, վո՜ւյ, վո՜ւյ:

Աղվես նըստիր տարու կյըլխուն,
Աշկեր իսկիր թաղ վառըկուն:

Աղվես կընաց մտավ ճաղաց,
Թաթեր վերուց, մե բոլ խաղաց,
Պոչը՝ մե գյազ, պինչը՝ բարակ:

Աղվես ֆռաց բոլոր գեղին,
Աշկը՝ կարմիր, քյուրքը՝ դեղին,
Տանը տեսավ՝ պատռավ լեղին:

Տղա Ավաքյ, խասի մարաքյ,
Ես քյի կուտամ մեղր ու կարաքյ,
Ճուտըմ ունիմ ի խիշատակ,
Աղվես տանի՝ մնամ տարտակ:

Աղվես էկավ նստավ դեզին,
Էրկեն ագին ծռավ վզին,
Նետով կուտամ աշկի տակին,
Որ մոտ չգա մեր խօրօզին:

## 18. Աղվես (կատակերգ)[18]

### /Շատախ/




Աղվես իրի Առնօս սարէն, վո՜ւյ, վո՜ւյ,
Իրի մըտավ մեր զուբա̈րէն, վո՜ւյ, վո՜ւյ,
Փըշրուկ կերավ, թափից վերէն, վո՜ւյ, վո՜ւյ,
Աշխարհ թափավ ուր թա̈մա̈շէն, վո՜ւյ, վո՜ւյ:

Աղվես կըսի. «Յեմ ծակ նեղ ի, վո՜ւյ, վո՜ւյ,
Խավու ճըտեր փորիս տեղի», վո՜ւյ, վո՜ւյ:
Աղվես իրի տափիկ-մափիկ, վո՜ւյ, վո՜ւյ,
Իրի մըտավ մեր կա̈նա̈փիկ, վո՜ւյ, վո՜ւյ:

Աղվես իրի սարէն լա̈լօվ, վո՜ւյ, վո՜ւյ,
Սիրտ կըտըփէր ջուխտըմ քյարօվ, վո՜ւյ, վո՜ւյ,
Խավու ճըտեր տըսնըմեկ ի, վո՜ւյ, վո՜ւյ,
Աղվես խասավ ւոր մէկմէկի վո՜ւյ, վո՜ւյ:

Աղվես նըստիր վա̈ր տա̈խտըկին, վո՜ւյ, վո՜ւյ,
Պոչն ի պիրիր պո̈ւլոր վըզին, վո՜ւյ, վո՜ւյ,
Աշկն ի թա̈լիր թա̈ղ տա̈նդըկին, վո՜ւյ, վո՜ւյ,
Կուզի տանի մեր դիկլօզին, վո՜ւյ, վո՜ւյ:

---

[18] «Հայրենի երգեր» ժողովածու, N 82, էջ 103, 116:

## 19. Աղվեսի երգ[19]




Ի՞նչըխ բալըդցար էդ դուռը,
Դարդըս կողիդ առնի, սաֆսար,
Կոտրուի քո ոտ ու կուռը,
Դարդս կողիդ առնի, սաֆսար:

Ծակովը նի մտար նեղլիկ,
Ջոկեցիր հաւերին դեղլիկ,
Դու արիր մի խնդում հաղլիկ,
Դարդս կողիդ առնի, սաֆար:
Գազէթ կը տամ էթայ Չինը,
Քեզնից կառնեմ հաւի գինը,
Կ'էրեմ քու մասաբ ու դինը
Դարդս կողիդ առնի, սաֆսար:

Գազէթ կը տամ դիբ ուռուսէթ,
Քեզի պէտքը չի գայ տեսէդ,

Պոչդ բարակ, դունչըդ սուլսուլ
Ականջներդ դիք էր խախուլ,
Կ'ուզէիր մի կարմիր գուլուլ,
Դարդս կողիդ առնի, սաֆսար:

Ըտոնք որ ջարդեցիր կէսին,
Նաիլաթ գայ քու փիս էրեսին,
Գիտեմ, կը կանչէս քու փեսին,
Դարդս կողիդ առնի, սաֆսար:
Կը կոտրեմ քերղան աքասէդ,
Դարդս կողիդ առնի, սաֆսար:

Գիտեք քո բունը մալանա,
Մէ ոտ ու քեաթդ չալանայ,
Լեզուդ կը կտրեմ՝ լալանայ,
Դարդս կողիդ առնի, սաֆսար:

## 20. Լորկե, լորկե[20]
## / Վան /




## 21. Լորկե[21]
## / Վան /




---

[19] *Կիրակոսեան Ա.,* Իրանի Սպահանի շրջ. Փերիա գավառի ժողովրդական և աշուղական երգերի ընտրանի, N 31, էջ 68-69:
[20] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 14, N 64, էջ 61:
[21] *Թումաճան Մ.,* ՀԵուԲ, հ. 4, N 250, էջ 297-299:

Մեր տան իտև արտ կորընկյան,
Խաթունե Լորկե,
Ձեր տան իտև արտ կորընկյան,
Խաթունե Լորկե:
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե, } 2x
Խաթունե Լորկե:
Ու ամպել ա կամար-կամար,
Խաթունե Լորկե,
Ու ես կուլամ քեզի համար,
Խաթունե Լորկե:
Լորկե, Լորկե...

Ու իսուն օր պաիք իմ պաhել,
Խաթունե Լորկե,
Քո ազիզ խաթըրի համար,
Խաթունե Լորկե:
Լորկե, Լորկե...

Ու ամպել ա փութա-փութա,
Խաթունե Լորկե,
Ու քո սիրած՝ կարմիր թութա,
Խաթունե Լորկե:
Լորկե, Լորկե:

## 22. Լորկե[22]
## / Վան /




## 23. Լորկե[23]
## / Վան /




## 24. Լորկե, լորկե[24]
## / Այնթապ /




[22] *Թումաճան Մ.,* ՀԵուԲ, հ. 4, N 251, էջ 299-300:
[23] *Մելիքյան Ս., Գարդաշյան Գ.,* Վանա ժողովրդական երգեր, հ. 2, N 58, էջ 4 :
[24] *Թումաճան Մ.,* Հայրենի երգ ու բան, հ. 2, N 57, էջ 91:

## 25. Լո̈ւրկե[25]
### / Ալաշկերտ /




Հավիր լուլկե, հավիր լուլկե,
Խանըմե Լուլկե,
Մեռնեմ էդ քո շեկ մազերուդ
Խանըմե Լուլկե:

Հավիր լուլկե, հավիր լուլկե,
Բեդավո Լուլկե,
Մեռնեմ էդ քո շեկ մազերուդ
Խանըմե Լուլկե:

Գացի հասա տուն Բաքյըրի,
Խանըմե Լուլկե,
Տվան յոթը փութ շաքյըրի,
Խանըմե Լուլկե:

Հավիր լուլկե…

Հարամ ըլներ էն Բաքյըրը,
Համտես չարի էն շաքյարը:
Հավիր լուլկե…
Խռովեցի, հելա, գացի,
Ռես Հեսոյի տուն գնացի:
Հավի լուլկե…
Հեսոն բերեց սեղան բացեց՝
Մի չոր հացի կտոր դրեց:
Հավիր լուլկե…
Խիղճդ ո՞ւր ա, այ տնաշեն,
Տունդ մնա սև ու անշեն
Հավիր լուլկե…
Խռովեցի հելա գացի,
Մի ծեր բիձա հանդիպեցի:
Բիձու տունը մի բոլ հաց ա,
Էդ վախտ հացից ես կշտացա:

## 26. Լորկե - Լորկե* [26]
### / Շատախ /




Էկանք, որ տեսնենք Ամիր,
Սեղան դըրին հաց ու պանիր,
Խաթունե Լորկե.
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե.
Խանըմե Լորկե:

Հարցինք. «տուննա՞ մեր Հերես»,
Կնիգ ելավ էրես-էրես,
Խաթունե Լորկե.
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե.
Խանըմե Լորկե:

Հասել ենք մոլլայի դուռ,
Կնիգ դարդից դարձէ մի բուռ,
Խաթունե Լորկե.
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե.
Խանըմե Լորկե:

---

[25] *Лисициан С.,* Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 1, с. 590-591 (բանասաց՝ Արշակ Սարգսյան):

[*] Երկու օրինակների (N 25, 26) քրդերենից թարգմանությունը մերն է:

[26] *Лисициан С.,* Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 2, N 107, с. 482 (բանասաց՝ Շամամ Տեր-Մկրտչյան):

## 27. Լուլկե - Լուլկե (Լորկե)[27]
## / Վերին Թալին /




Կանաչ արտը մի՛ կոխի,
Խանըմե Լուլկե,
Սըրդով յարըտ մի՛ փոխի,
Խանըմե Լուլկե:

Յէրկէն արտը կօրէգ ա,
Ջանըմե Լուլկե,
Կամ մի նըստի՝ օրէնք ա,
Խանըմե Լուլկե:

Աչքով կանէմ դու հասկցի,
Խանըմե Լուլկե,
Վառիր, էրիցիր ընձի,
Ջանըմե Լուլկե:

Բոստան դըրի, դարի կօղ,
Ջանըմե Լուլկե,
Գօրբագօր լինի էն հօղ,
Ջանըմե Լուլկե:

## 28. Լորկե - Լորկե*[28]
## / Վան /




---

[27] *Лисициан С.,* Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 2, N 108, с. 483-485 (բանասաց՝ Անուշ Թոդոյան):
* Թարգմանությունը մերն է: Քրդերեն բնագիրը տե՛ս. Նույն տեղում՝ էջ 482-486:
[28] Նույն տեղում՝ N 109, с. 485-486 (բանասաց՝ Մովսես Տեր-Հովհաննիսյան):

Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,
Խանըմե Լորկե,
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,
Խաթունե Լորկե,
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,
Շեկ աղջիկ Լորկե:

Ելանք, հասանք տուն Ամարանց,
Խանըմե Լորկե,
Բերին սպիտակ լավաշ ու հաց,
Խաթունե Լորկե,
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,
Շեկ աղջիկ Լորկե:

Էկանք, հասանք մոլլայի դուռ,
Կնիգ դարդից դառավ մի բուռ:

Հարցրինք «տո՞ւննա աղբեր Հերես»,
Ջոքանջն էլավ էրես-էրես:

Մըտանք տունը Այվազ աղբոր,
Բերին դըրին սոխ ու սխտոր:

Էկանք հարցրինք «ո՞ւր է Ամիր»,
Մեզ տըվեցին հաց ու պանիր:

Ելանք, գընացինք Մխիկանց,
Մեզի տըվին էձու խորված:

## 29. Լուռկե[29]
## / Ալաշկերտ /




Ելա կըտուր, երթիկ բացի,
Խանըմը Լուռկե,
Կարմիր խընձոր գըլորեցի,
Փորսուրե Լուռկե:

Ելա տանիս, թափ քելեցի,
Խանըմը Լուռկե,
Սիրուն տուն չէ, նստա լացի,
Փորսուրե Լուռկե:

## 30. Լուրկե, լուրկե[30]
## / Ալաշկերտ /




Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Խանըմե լուրկե,
Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Ջանըմե լուրկե:

Խանըմ կայնե վարդոյ տանիս,
Խանըմե լուրկե,
Բայն մընի կառկոկանիշ,
Ջանըմե լուրկե:

Ելա երթիկ թափ քելեցի,
Խանըմե լուրկե,
Ոտով զարկի, երթիկ բացի,
Ջանըմե լուրկե:

Խանըմ տուն չէր՝ նստա չայի,
Խանըմե լուրկե,
Առանց յարի ես մնացի,
Ջանըմե լուրկե:

[29] *Մելիքյան Ս.,* Հայ ժողովրդական երգեր ու պարեր, հ. 2, N 248, 124, 199:
[30] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱԶ-ի արխիվ, Կաբինետ, 1982, N 2:

## 31. Լուրկե[31]
## / Ալաշկերտ /




Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Խանըմե լուրկե,
Խանում կայնե վարդ հոտ առնի,
Ջանըմե լուրկե:

Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Խանըմե լուրկե,
Բոյըն մնի կարկ ու կամիշ,
Ջանըմե լուրկե:

## 32. Լուրկե[32]
## / Ալաշկերտ /




Լուրկե, Լուրկե, Լուրկե, Լուրկե,
Խանըմե Լուրկե,
Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Շորշորե Լուրկե:

Արտը ցանել եմ թութուն,
Խանըմե Լուրկե,
Շախտեն էկավ, զարկեց բիթուն,
Ջանըմե Լուրկե:

Ես իմա՞լ էնիմ անթութուն,
Խանըմե Լուրկե,
Կորավ շոքերիսի խուդդում,
Շորշորե Լուրկե:

Լուրկե, Լուրկե, Լուրկե, Լուրկե,
Խանըմե Լուրկե,
Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Շորշորե Լուրկե:

---

[31] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱԶ-ի արխիվ, Մարտունի, 1982/ V, գ. Արծվանիստ, N 169:

[32] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱԶ-ի արխիվ, Մարտունի, 1982/X, գ. Լիճք, N 269:

## 33. Լուրկե, լուրկե[33]
## / Մուշ /




Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Խանըմե լուրկե,
էսօր բանա հե՜յ լա սուրկե,
Յա՝ վաղը լուրկե:
Քըռի դոշը ցանի թութուն,
Խանըմե լուրկե,
Շախտեն զարկեց, տարավ բիթուն,
Ջանըմե լուրկե:
Թութուն չկար մըջ իմ դութուն,
Խանըմե լուրկե,
Էլ չըկըրնամ հասնիմ մեր տուն,
Ջանըմե լուրկե:
Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Բեդավո լուրկե:
Նըստոն կենին թութունի բաս,
Խանըմե լուրկե,
Իրար կասին նաֆասըմ տաս,
Ջանըմե լուրկե:

Հե, հե՜յ, լուրկե, լուրկե, լուրկե,
Խանըմե լուրկե,
Գընա, գընա ես գալիս եմ,
Խանըմե լուրկե:
Մի նաֆասըն քեզ տալիս եմ,
Ջանըմե լուրկե:
Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Բեդավո լուրկե:

Նըստիմ ֆայտոն, էթամ ի հարս,
Խանըմե լուրկե,
Բերիմ մայրիկիս թազա հարս,
Ջանըմե լուրկե:
Հե, հե՜յ, լուրկե, լուրկե, լուրկե,
Խանըմե լուրկե,
Էսօր բանա հե՜յ լա սուրկե,
Բեդավո լուրկե:

[33] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Արարատ, 1977, գ. Չինար, N 33:

## 34. Լուրկե, լուրկե[34]
### / Կարս /




Լուրկե, լուրկե, լուրկե բարով,
Խանումե վա՜յ, վա՜յ,
Լուրկե, լուրկե, լուրկե բարով,
Ջանըմե վա՜յ, վա՜յ:

Իմ թուշըս յարըս կպագե,
Խանումե վա՜յ, վա՜յ,
Գիշեր՝ գրկե, ցերեկ՝ լլկե,
Ջանըմե վա՜յ, վա՜յ:

Մըշո մալեն դրկեց գոզալ,
Խանումե վա՜յ, վա՜յ,
Իմ հեր քեզի աղջիկ չի տալ*,
Ջանըմե վա՜յ, վա՜յ:

Էսօր էլավ յար ու գնաց,
Խանումե վա՜յ, վա՜յ,
Դեմ առավ ու սարին մընաց,
Ջանըմե վա՜յ, վա՜յ:

Բաքվա բոլորը վա՜յ, փոս ա,
Խանումե վա՜յ, վա՜յ,
Քար կթալեմ վա՜յ, կըհոսա**,
Ջանըմե վա՜յ, վա՜յ:

## 35. Լուրկե[35]
### / Մանազկերտ /




Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Խանըմե լուրկե,
Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Բեդավե լուրկե:

Յա գընա, գընա հետիդ եմ,
Խանըմե լուրկե,
Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե,
Բեդավե լուրկե:

Յար էլա սարը սար տեսա,
Խանըմե լուրկե,
Ճերմակ գուլպով յարըս տեսա,
Բեդավե լուրկե:

---

[34] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Դիլիջան, 1982, N 16:

* Խաղիկի նշված տողերը մենք ենք հարմարեցրել: Երկտողի ավարտուն հանգը ճիշտ լինելու համար Մ. Աբեղյանի «Ժողովրդական խաղիկներ»-ից ընտրել ենք վանկային վերջավորությամբ համապատասխան տողեր. «Հառատ ուներ փաներ լուրկե»:

** «Ջահել խաբելը վա՜յ, հեշտ ա»:

[35] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Ախուրյան, 1982, N 241:

## 36. Լուրկե[36]
## / Ալաշկերտ /




## 37. Լուրկե[37]
## / Ալաշկերտ /




## 38. Լորկե ջան[38]
## / Ալաշկերտ /




---

[36] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Արագածոտնի մ., 2001, գ. Ծաղկաշեն, N 43:
[37] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Արագածոտնի մ., 2001, գ. Շենավան, N 43:
[38] ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Արագածոտնի մ., 2002, գ. Ծաղկաշեն, N 26:

| NN | Երգի անվանում | Աղբյուրը | Հրատարակում | Երգի գրառում / Ծննդավայր | Ձայնագրող / Վերծանող | Երգասացի մասին տվյալներ |
|---|---|---|---|---|---|---|
| *1.* | *2.* | *3.* | *4.* | *5.* | *6.* | *7.* |
| 1. | Թագվորագովք (միջին մաս) | «Թալին» ժողովածու, N 3, էջ 63-71 | Երևան, 1984, «Սովետական գրող» | Թալին, 1971 / Մուշ-Սասուն | Ալինա Փահլևանյան Արուսյակ Սահակյան | Օհանյան Հակոբ, ծնվ. Ագարակ, 1896 թ., գաղթել է Սասունից 1915 |
| 2. | Գացե՛ք, տեսէ՛ք | Թումաճան Մ., ՀեուԲ, հ. 2, N 69, էջ 107 | Երևան, 1983, ՀՍՍՀ ԳԱ | Բոստոն, 1937 / Չմշկածագ | Միհրան Թումաճան | Մամա Ջելալյան, ծնվ. 1867 թ. (70 տ.) |
| 3. | Եկէ՛ք, տեսէ՛ք (Փեսագովանք) | Աճեմեան Յ., «Հարսնա-ճըղայ», N 3, էջ 19 | Փարիզ, 1955, «Le Soleil» | Փարիզ, 1950-ական / Չմշկածագ | Հովհաննես Աճեմյան / Ավետիկ Մեսումենց | — |
| 4. | Ծառ-խնկենի (հատված) | Սարգսյան Մ., «Տաղք հայրենյաց», N 45, էջ 78-79 | Երևան, 1998, «Հայաստան» | Երևան, 1970-80-ական / Մուշ-Սասուն | Հովհաննես-Մկրտիչ Սարգսյան (Մգրո) | — |
| 5. | Էդ դիզան (Կատակ) | Կոմիտաս, ԵԺ, հ. 3, N 24, էջ 63 | Երևան, 1969, «Սովետական գրող» | Էջմիածին, 1899-1903 / — | Կոմիտաս | — |
| 6. | Էն վերի գլխախնձոր | Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 76, էջ 76 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / — | Կոմիտաս | — |
| 7. | Այն վերի գլխախնձոր | Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 77, էջ 76 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / Ռշտունիք, Վասպուրական | Կոմիտաս | — |
| 8. | Նա լուս էր | Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 78, էջ 77 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1899-1900 / Ռշտունիք, Վասպուրական | Կոմիտաս | — |
| 9. | Էն դիզան | Հարությունյան Հ., «Մանյակ» ժողովածու, N 44, էջ 36 | Երևան, 1958, «Հայպետհրատ» | Էջմիածին, 1900-ական / Ալաշկերտ | Հակոբ Հարությունյան | |

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| 10. | Տե՛ս, թե ո՛րն ա | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ արխիվ, Արթիկ, 1976, N 597 | անտիպ | Արթիկ, 1976 / Մուշ | Մարգարիտ Բրուտյան / Ալինա Փահլևանյան | Գրիգորյան Արամայիս, ծնվ. 1902, Մեծ Մանթաշ – Բասեն |
| 11. | Հա՜յ աղվսիկ (Հո՜յ, նար, ջանըմը նար) | Թումաճան Մ., ՀեուԲ, h. 4, N 191, էջ 232-234 | Երևան, 2005 «Զանգակ-97» | Փարիզ, 1922 / Վան | Միհրան Թումաճան | Տիգրան Չիթունի (1881-1960)՝ վանեցի բանահավաք-ազգագրագետ |
| 12. | Մեյ խավմ կեր (Հո՜յ, նար) | Մելիքյան Սպ., Վանա ժողովրդական երգեր, 2 մաս, N 60, էջ 4 | Երևան, 1928, Հայպետհրատ», | Երևան / Վան | Սպիրիդոն Մելիքյան | — |
| 13. | Աղվես գնաց մտավ ջաղաց | Կոմիտաս, ԵԺ h. 5, N 88, էջ 40 | Երևան, 1979, «Սովետական գրող» | | Կոմիտաս | — |
| 14. | Աղվես գնաց մտավ ջաղաց | Կոմիտաս, ԵԺ, h. 11, N 55, էջ 40 | Երևան, 2000, «Գիտություն» | Էջմիածին, 1904 | Կոմիտաս | — |
| 15. | Աղվես գնաց | Կոմիտաս, ԵԺ, h. 13, N 157, էջ 143 | Երևան, 2004, «Գիտություն» | Էջմիածին, 1907 | Կոմիտաս | — |
| 16. | Աղւէսն էկաւ | Մելիքեան Ս., Ա. Տէր-Ղեւոնդեան, Շիրակի երգեր, h. 1, N 115, էջ 55 | Թիֆլիս, 1917, «Քարթլի» | Շիրակ, 1914 / Շիրակ | Սպիրիդոն Մելիքյան, Անուշավան Տեր-Ղևոնդյան | — |
| 17. | Աղվես | «Հայրենի երգեր» ժող., Հայրիկ Մուրդայանի ձայնից վերծանեց Ա. Փահլեվանյանը, N 82, էջ 103 | Երևան, 2007, «Նոր գիրք» | Երևան, 1976 / Շատախ | Ալինա Փահլևանյան | Հայրիկ Մուրադյան, ծնվ. 1905, Շատախ – 1999 Երևան |
| 18. | Աղվես (կատակերգ) | «Հայրենի երգեր» ժող., Հայրիկ Մուրդայանի ձայնից վերծանեց Ա. Փահլեվանյանը, N 81, էջ 103 | Երևան, 2007, «Նոր գիրք» | Երևան, 1976 / Շատախ | Ալինա Փահլևանյան | Հայրիկ Մուրադյան, ծնվ. 1905, Շատախ – 1999 Երևան |
| 19. | Աղուէսի երգ | Կիրակոսեան Ա., Իրանի Սպահանի շրջ. Փերիա գավառի ժողովրդական և աշուղական երգերի ընտրանի, N 31, էջ 68-69 | ԱՄՆ, Փասատենե, 1996, «Դրազարկ» | Երևան, 1973 / Փերիա գավառ (պարսկահայք) | Անահիտ Կիրակոսեան | Սիմոն Օղլի |

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
|---|---|---|---|---|---|---|
| 20. | Լորկե, լորկե | Կոմիտաս, ԵԺ h. 14, Ձեռագիր, թ. 313 (13), N 64, էջ 61 | Երևան, 2006, «Գիտություն» | Էջմիածին, 1908 / Վան | Կոմիտաս | Տիգրան Չիթունի (1881-1960), վանեցի բանահավաք-ազգագրագետ |
| 21. | Լորկե | Թումաճան Մ., ՀԵուԲ, h. 4, N 250, էջ 297-299 | Երևան, 2005, «Զանգակ-97» | Փարիզ, 1922 / Վան | Միհրան Թումաճան | Տիգրան Չիթունի (1881-1960), վանեցի բանահավաք-ազգագրագետ |
| 22. | Լորկե | Թումաճան Մ., ՀԵուԲ, h. 4, N 251, էջ 299-300 | Երևան, 2005, «Զանգակ-97» | Նյու-Յորք, 1935 / Վան | Միհրան Թումաճան | Շուշանիկ Շահինյան, վանեցի |
| 23. | Լորկե | Վանա ժողովրդական յերգեր, պրակ 2, N 58, էջ 4 | Երևան, 1928, «Հայպետհրատ» | Թիֆլիս, 1917-1918 / Վան | Սպիրիդոն Մելիքյան Գարեգին Գարդաշյան | -- |
| 24. | Լորկե, լորկե | Թումաճան Մ., ՀԵուԲ, h.2, N 57, էջ 91 | Երևան, 1983, «Գիտություն» | Բոստոն, 1937 / Այնթապ | Միհրան Թումաճան | Հովհաննես Հարությունյան, ծնվ.1890-ական, Այնթապ, |
| 25. | Լուրկե | Лисициан С., Старинные пляски и театральные представления арм. народа, т. 1, с. 590-591 | Ереван, 1958, «Академия» | 1930-ական թ. / Ալաշկերտ | Մուշեղ Աղայան | Արշակ Սարգսյան, ալաշկերտցի |
| 26. | Լորկե-լորկե | Лисициан С., Старинные пляски и театральные представления арм. народа, т. 2, N 107, с. 482 | Ереван, 1972, «Академия» | 1930-ական թ. / Շատախ | Սպիրիդոն Մելիքյան | Շամամ Տեր-Մկրտչյան, շատախցի |
| 27. | Լուլկե-Լուլկե (Լորկե) | Лисициан С., Старинные пляски и театральные представления арм. народа, т. 2, N 108, с. 483-485 | Ереван, 1972, «Академия» | 1930-ական թ. / Վերին Թալին | Սպիրիդոն Մելիքյան | Անուշ Թոդոյան |
| 28. | Լորկե-Լորկե | Лисициан С., Старинные пляски и театральные представления арм. народа, 2 т., N 109, с. 485-486 | Ереван, 1972, «Академия» | 1930-ական թ. / Վան | Մուշեղ Աղայան | Մովսես Տեր-Հովհաննիսյան, վանեցի |

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
|---|---|---|---|---|---|---|
| 29. | Լուռկե | Մելիքյան Ս., Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ. 2, N 248, էջ 124, 199 | Երևան, 1952, «Հայպետհրատ» | Ախտա, 1926 / Ալաշկերտ | Սպիրիդոն Մելիքյան | Հ. Հովհաննիսյան, ծնվ. 1904, Քանաքեռ |
| 30. | Լորկե | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Կաբինետ, N 2 | Երևան, 1982 | --- / Ալաշկերտ | Ալինա Փահլևանյան | Միեր Նավոյան, ծնվ. 1971, Մարտունի, գ. Արծվանիստ |
| 31. | Լուրկե | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Մարտունի, 1982 / V գ. Արծվանիստ, N 169 | -- | Մարտունի, 1982 / V գ. Արծվանիստ / Ալաշկերտ | Խաչատուր Մարտիրոսյան / Աստղիկ Սահակյան | Հարոյան Արուս, ծնվ. 1929, տեղացի -> Ալաշկերտ, գ. Մանգասար |
| 32. | Լուրկե, լուրկե | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Մարտունի, 1982 / X, գ. Լիճք, N 269 | -- | Մարտունի, 1982 / X, գ. Լիճք / Ալաշկերտ | Խաչատուր Մարտիրոսյան / Ալինա Փահլևանյան | Գեղամյան Թամարա, ծնվ. 1928, տեղացի -> Ալաշկերտ |
| 33. | Լուրկե, լուրկե | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Արարատ, 1977, գ. Ձինար, N 33 | -- | Արարատ, 1977, գ. Ձինար / Մուշ | Մարգարիտ Բրուտյան / Խաչատուր Մարտիրոսյան | Սիմոնյան Օսան, ծնվ. 1926, Մարտունու շրջ. Ատաշ գ. –> Մուշ |
| 34. | Լուրկե | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, ք. Դիլիջան, 1982, N 16 | -- | ք. Դիլիջան, 1982 / Կարս | Խաչատուր Մարտիրոսյան | Մուրադյան Սիրուշ, ծնվ. 1921, Կրասնոսելսկի շրջ., գ.Մարտոնի Մուրադյան Հրանուշ, ծնվ. 1926, Կրասնոսելսկի շրջ., գ.Մարտունի |
| 35. | Լուրկե | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, Ախուրյան,1982 գ.Վահրամաբերդ, N 241 | -- | Ախուրյան,1982 գ.Վահրամաբերդ / Մանազկերտ | Խաչատուր Մարտիրոսյան | Ներսես Պողոսյան, ծնվ. 1907 - Մանազկերտ (Բիթլիսի նահ., Մուշ գավ.) |

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
|---|---|---|---|---|---|---|
| 36. | Լուրկե | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, N 43 | -- | Արագածոտնի մ., գ. Շենավան, 2001 / Ալաշկերտ | Արուսյակ Սահակյան / Աստղիկ Սահակյան | Ղազարյան Վերմիկ (Ռիմա), 1938, Ապարանի շրջ. գ.Արայի -> Ալաշկերտ |
| 37. | Լուրկե | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, N 43 | -- | Արագածոտնի մ., գ. Շենավան, 2001 / Ալաշկերտ | Արուսյակ Սահակյան / Աստղիկ Սահակյան | Մարգարյան Անահիտ, ծնվ. 1936, գ. Հարթավան - Ալաշկերտ |
| 38. | Լորկե ջան | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ-ի արխիվ, N 26 | -- | Արագածոտնի մ., գ. Ծաղկաշեն, 2002 / Ալաշկերտ | Խաչատուր Մարտիրոսյան | Կարապետյան (Ավագյան) Մարինե, ծնվ. 1962 գ.Մելիք |

## 1. Հարսանեկան երգ[1]
## / Ակն /




Առավոտուն կելլես, երեսդ վըլա (լվա),
Էպիրշում մազերտ դրեր ես հինա,
Ատ աղվոր երեսետ պագ մի տուր հըլա (դեռ):

Առավոտուն կելլես, արև կու ցաթե,
Բերանտ ուր կու բանաս, մեղր կու կաթե,
Եկուր նստինք, անուշ, անուշ խորաթե:

Աղվոր մին է կայնել դռանը կեսը,
Շարեր ոսկի եւ' արծաթ ձգեր երեսը,
Հազար ոսկի կարժե, աղվոր, քու տեսը:

Ծաձկե թոռ (քնքուշ) զիլիֆդ (խոպոպիկ), մարդը կերես դուն,
Ճերմակ ճեվեհիր ես, անգին քար ես դուն:

Եկուր, աղվոր աղջիկ, հարս եղար մեզի,
Ցաղութ, զմրութ, անգին քար եղար մեզի:

Արի, ծով աչեր, իս մի լացըներ,
Իս շատ է լացուցած, դուն մի լացըներ[*]:

## 2. Հարսանեկան երգ հինայի[2]
## / Ակն /




---

[1] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 9, Երևան, «Գիտություն» հրատ., 1999, N 48, էջ 91:
[*] *Ճանիկեան Հ.,* Հնութիւնք Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 422:
[2] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 9, Երևան, «Գիտություն» հրատ., 1999, N 50, էջ 92:

## 3. Հարսանեկան հինայի երգ[3]

/ Ակն /




## 4. Աղջի, հարսնառդ եկավ[4]

/ Ակն /




## 5. Մեկ ձեռքդ հինայե[5]

/ Ակն /




---

[3] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 9, N 82, էջ 105:

[4] *Կոմիտաս*, ԵԺ, հ. 11, N 40, էջ 36:

[5] *Թումաճան Մ.,* ՀԵուԲ, հ. 2, N 98, էջ 134:

## 6. Մեկ ձեռքդ հինա է[6]
## / Ակն /




## 7. Հինան էկավ, շաղեցեք[7]
## / Ակն - Արմտան /




Հինան էկավ, շաղեցեք,
Հինան էկավ, շաղեցեք:
Խընայա կել, խնայա,
Խընայա կել, խնայա:

## 8. Հինա դըրին[8]
## / Նոր Նախիջևան /




Հինա դըրին, բաղնիք դարին,
Զիլֆիվ մազս փերչամ արին,
Գուլխուս ալ փոշի գաբեցին,
Բերին քոշան գայնեցուցին:
Սիրագան քուրիգներ, դառոսը ձեզի:

Եփոր աչքս նարան դեսավ,
Երկու թուշես ալ գաթեցավ,
Հարիգ, մարիգ, մնաք բարով,
Աստված մեզի բահե սէրով:
Սիրագան քուրիգներ, դառոսը ձեզի:

---

[6] *Թումաճան Մ.,* ՀեուԲ, հ. 2, N 99, էջ 135:
[7] *Թումաճան Մ.,* Հ ՀեուԲ, հ. 2, N 100, էջ 135:
[8] Հայ ազգագրություն, բանահյուսություն, հ. 2, Երևան, «Գիտություն» հրատ., 1971, N 12, էջ 148:

Փեսաս ծնողաց հելալ օրթի,
Գուլխուն գդակը գաբուտ մորթի,
Մեգատիկ էր նա իր սոյին,
Մեռնիմ անոր սելվի բոյին:
Սիրագան քուրիգներ, դառոսը ձեզի:

Թագավորս կուկա թուրով,
Հալխը շադ է, գառնու զոռով.
Բաշխիշներով, հարգինքներով,
Աստված մեզի բահե սէրով:
Սիրագան քուրիգներ, դառոսը ձեզի:

Գերթաս մեզմեն, ջամփադ տյուզ է,
Գերաձդ չամիչ ու թուզ է,
Աչքդ գուլա, սիրտդ գուզե,
Մորեդ պաժնըվել սիրտդ չուզե.
Հարգը գասին աղպես գուզե:
Սիրագան քուրիգներ, դառոսը ձեզի:

## 9. Մեր հարսը խերով[9]
## / Եդեսիա - Ուռհա /




Մեր հարսը խերով,
Փեսան պեխերով,
Աթլազ (մետաքսե) տեղերով,
Կենեչ մոմերով.
Քալե՛, հարսըս, քալե՛.
Քու հինադ օրհնած:

Էկան տանողին,
Չարչար գըրողնին,
Հոգի հանողնին,
Էկան տանողնին,
Հարսը հանողնին,
Մոմերն վառողնին:

Կ'երթամ չեմ կայնիր,
Ճամբաքիս փուշ է.
Սիրտիս քունքուշ է
Էոկիկն (ամուսին) անուշ է:

[9] *Թումաճան Մ.,* ՀեուԲ, հ. 2, N 41, էջ 76-77:

## 10. Մի՛ լար մարիկ (Խաչերկաթ)[10]
## / Երզնկա /




Երազըդ գալով ա մուրատ չառնվիր,
Մուրատ առնելով ա կարոտ չառնըվիր:
Խաչերկաթ, խաչերկաթ,
Կողտան ինճե տուր.
Ղըզ սենին յաթտուղուն
Պիր պու կիճե տուր:

Էկոր, անամ, էկոր, մանտըրտիկ էկոր,
Խալին ալ փըռեր եմ, վըրայեն էկոր,
Ալ փեշերըդ դերվեր թոփե ու էկոր
Խաչերկաթ, խաչերկաթ...

## 11. Աղջիկ, մ՛ըլ կը տանեն (Անամի)[11]
## / Չմշկածագ /




---

[10] *Թումաճան Մ.,* ՀեուԲ, 2 հ., N 170, էջ 183:

[11] *Աճեմեան Յ.,* Հարսնաճղայ՝ հաւաքածոյ հայ ժող. երգերու Չմշկածագէն եւ շրջաններէն, Փարիզ, Imprimerie «le Soleil», 1955, N 1, 15 16-17:

Աղջիկ հարսնըվորըդ, անամ, դուռը կը սպասեն
Արծըթէ պըրոնով, մայրիկ, մազըդ կը հիւսեն:
Ոսկիէ թասին մէջ, անամ, հիննադ կը շաղեն,
Աղջիկ բաղնըվորին, մայրիկ, հալը եաման է:

Լեռներն ի վար կուգայ, աման, փուսն ու տումանը,
Դացէ՛ք, ըսէ՛ք մօրկան, մայրիկ, կըյրէ կումանը:
Լեռները ձոն եկեր, աման, օվան տուման է,
Սիլայէն զատուողին, մայրիկ, հալը եաման է:

Եկո՛ւր, աղուոր աղջիկ, անամ, հարս եղիր մըզի,
Չմրուխտ եախութ, քարեր, մայրիկ, բերեր ենք ջըզի:
Խաթ մը լաթ ենք բերեր, անամ, վիրայեկդ անցուր,
Ոտքդ ուղուր բռնէ, մայրիկ, ու մեզ խնդացուր:

Դառն ի վեև ես կայներ, անամ, գրկածըդ մանչ է,
Հագածըդ հերայի, մայրիկ, վըրան կանանչ է:
Հագածըդ հերայի, անամ, վըրան կանանչ է,
Քեզ տեսնող կըյրիճը, մայրիկ, խորուն կը հառչէ:

Դիմացի լեռները, անամ, քաշեր են փեհտէ,
Խուզին մօմէն զատել, մայրիկ, ի՞նչ դժուար տէրտ է:
Մի՛ լար աղուոր աղջիկ, անամ, աչուիդ կ'աւրըւի,
Քեզ պըզտիկ կարգողին, մայրիկ, տընակն աւրըւի:

Եկէ՛ք, առնե՛նք, անամ, էսիկի մերն է,
Մընացած աղջիկներ, մայրիկ, տառոսը ձերն է:
Մենք ելեր ենք կ'երթանք, անամ, մեզ եկուր լացուր,
Սրտիկդ ամուր բռնէ, մայրիկ, լաթերս հագցուր:

Փըլի՛ր, լե՛ռնակ, փըլի՛ր, անամ, սիլաս երեւայ,
Սիլայիս ետեւէն, մայրիկ, հայրիկս երեւայ:
Անօրէն, անօրէն, անամ, մայրիկ, անօրէն,
Որ է զիս տըւիր որ, մայրիկ, եկան կը տանեն:

Կանչեցէք հայրիկաս, անամ, որ գայ իմ քովըս,
Քաղեմ ոսկետանըս, մայրիկ, ետ տամ ձեռքովըս:
Թողնեմ ձիս ուրիշին, անամ, երթամ ոտքովըս,
Ըսեմ օգուտ չ'ունի, մայրիկ, տ'երթամ կամքովըս*:

## 12. Զարկիցեք սազիրե[12]
## / Տիգրանակերտ /




---

* Այս երգի առաջին երկու տները երգում են «Աղջիկ բաղնվորը» (բաղնեվոր՝ բաղնիք գնացող), իսկ մնացածը՝ «Հարսնավորը» (հարսնավոր՝ հարսանիքին մասնակցող), դրանք ըստ էության, հարսի լացերգի քառատող տներն են:

[12] *Թումանян Մ.,* ՀեուԲ, հ. 3, N 22, էջ 28-29:

Խաննան շաղեցեք,
Մոմիր տնկեցեք,
Եկեք ազբընիր,
Առուս հաննեցեք:

Մամիկ, դու հալալ,
Մամիկ, դու հալալ.
Կաթիկդ իմ կերիր,
Էր՚ ընծի հալալ:

Պապիկ դու հալալ,
Պապիկ, դու հալալ.
Հացիկդ իմ կերիր,
Էր՚ ընծի հալալ:

Աղբեր, դու հալալ,
Աղբեր, դու հալալ.
Ջրիկդ իմ խմիր,
Էր՚ ընծի հալալ:

Քուրիկ, դու հալալ,
Քուրիկ, դու հալալ.
Նխշածդ իմ հագիր,
Էր՚ ընծի հալալ:

Խալե, դու հալալ,
Խալե, դու հալալ.
Կարածդ իմ հագիր,
Էր՚ ընծի հալալ:

Ամմե, դու հալալ,
Ամմե, դու հալալ.
Ձևածդ իմ հագիր,
Էր՚ ընծի հալալ:

## 13. Ախչի՛, հարսնառըդ էկավ[13]
## / Սասուն /




[13] Հայ ավանդական երաժշտություն, հ. 13, Արամ Քոչարյանի գիտարշավային նյութերի ընտրանի (ժողովրդական երգեր), կազմ.՝ Սարգսյան Մ., Սիգրանյան Մ., Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2015, N 21, էջ 57:

Ախչի՛, հարսնառդ էկավ,
Վերին կալերեն,
Ալ-կալ, կալերեն,
Քեզին ալ բերավ
Թղթի ծալերեն,
Ալ-կալ, ծալերեն, ծալերեն:

Գընում ես ձեր տանից,
Տանեն մի նոր տուն,
Ալ-կալ*, մի նոր տուն,
Բընակվում ես և ապրում ես,
Անձնատուր, անձնատուր:

## 14. Աղջի՛, հարսնառդ էկավ[14]
## / Հայաստանի Անիի շրջան /




* Մի շարք շրջաններում (հիմնականում թուրքաբնակ). «Հինա դնելու» երգերն անվանում են «Ալ-գելի», «Ալ-կելի», «Ալ-կալի»-ներ (թուրք.՝ կարմիր գլուխ):
[14] Հայ ժողովրդական երգեր և նվագներ, Անի, Երևան, 2010, N 9, էջ 28:

## 15. Բալու քաղաք շինուեր է (Հինայումի երգ)[15]
## / Բալու /




Բալու քաղաք շինուեր է,
Էրկաթէ դուռ դըրուեր է,
Ա՜խ, ըսի, մըտնիմ ներսը,
Եարըս մէջը կորեր է:

Աղանիին, ճերմակը,
Աղջի մի՛ էներ (մ'էներ) ըս նազը,
Շատ պըզտիկուց սիրեր իմ,
Դըժար է ըս զատուիլը:

Ա՜խ, կ'էնիմ, արին գու գայ,
Ճիկերըս քարին գու գայ,
Ի՞նչ էնիմ ըս աղկէկան
Գըրկել պագնիլըս գու գայ:

Աղանին զարկին, ինկաւ,
Թեւ ու թիկունքը կոյրաւ,
Հեյ մ'ալ ըսի՝ (մէկ) տեսնիմ,
Ինք իրան օտքի էլաւ:

Ա՜խ, կ'էնիմ, արին գու գայ,
Ճիկերս քարին գու գայ,
Ի՞նչ էնիմ ըս աղկէկան,
Առնել պառկիլըս գու գայ:

---

15 *Ալահայտոյեան Պ.,* Բալուի (և տարածաշրջանի) երաժշտական ազգագրական հաւաքածոյ, Գալիֆորնիա, Կլենտեյլ «Դրազարկ» հրատ., 2009, էջ 205-206:

## 16. Ախչի, հարսնարդ էկավ[16]




Կանչե կռունկ, կանչե,
Քանի գարուն է,
Ղարիբներու սիրտը
Գունդ-գունդ արուն է:

Աղբեր, արի աղբեր,
Եզները բառնանք
Էրթանք ղարիբ երկիր՝
Թեզոք ետ դառնանք:

Կանչե կռունկ, կանչե,
Ձենդ բարակ է,
Յարիս լեզուն՝ թազա
Մեղրած կարագ է:

Կռունկ, եղած տեղդ,
Չայիր – չիման է
Աշխարքը արեգակ՝
Ինձի դուման է:

## 17. Ախչի, հարսնարդ էկավ[17]




---

[16] *Բրուտյան Ա.,* Ռամկական մրմունջներ, հ. 1, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1985, N3, էջ 25:
[17] Նույն տեղում:

## 18. Աղջի՛, հարսնառդ էկավ[18]
/ Բասեն /




## 19. Աղջի՛, յարդ էկավ կալերեն[19]
/ Երզնկա /




[18] ԳՆ ԵՊԿ ՖԱԶ, Սպիտակ, 1975, գ. Թափանլի, N 172:
[19] ԳՆ ԵՊԿ ՖԱԶ, Կաբինետ, 1977, N 8:

## 20. Աղջի, հարսնառդ եկավ[20]
### / Կարս /




## 21. Հինա դնելու երգ[21]
### / Արճեշ – Վան /




[20] ԳՆ ԵՊԿ ՖԱԶ, Արթիկ, 1985, N 12:
[21] ԳՆ ԵՊԿ ՖԱԶ, Արտաշատ, 1976, N 102:

## 22. Աղլամա, մերիկ, աղլամա[22]
## / Ալաշկերտ /




---

[22] ԳՆ ԵՊԿ ՖԱՁ, Երևան, 1988, N 21:

## 23. Հինայ-նայ[23]
## / Պարսկահայաստան /




## 24. Հինայ-նայ (Ծանր պար)[24]
## / Պարսկահայաստան /




---

[23] *Կիրակոսեան Ա.,* Իրանի Սպահանի շրջ. Փերիա գավառի ժողովրդական և աշուղական երգերի ընտրանի, Փասատենա, (California), «Դրազարկ» հրատ., 1996, N 15, էջ 40:

[24] ԳՆ ԵՊԿ ՖԱՁ, Լենինական, 1984, N 145:

| NN | Երգի անվանում | Աղբյուրը | Հրատարակում | Երգի գրառում / Ծննդավայր | Ձայնագրող / Վերծանող | Երգասացի մասին տվյալներ |
|---|---|---|---|---|---|---|
| *8.* | *9.* | *10.* | *11.* | *12.* | *13.* | *14.* |
| 1. | Հարսանեկան երգ | Կոմիտաս. ԵԺ, հ. 9, N 48, էջ 91 [ժող. IV/2] | Երևան, 1999, «Գիտություն» | Վաղարշապատ, 1892-1894 / Ակն | Կոմիտաս | Հովսեփ Ճանիկյան, ծնվ.1840 թ., Ակն, բանահավաք-ազգագրագետ |
| 2. | Հարսանեկան երգ հինայի | Կոմիտաս. ԵԺ, հ. 9, N 50, էջ 92 [ժող. IV/4] | Երևան, 1999, «Գիտություն» | Վաղարշապատ, 1892-1894 / Ակն | Կոմիտաս | Հովսեփ Ճանիկյան, ծնվ.1840 թ., Ակն, բանահավաք-ազգագրագետ |
| 3. | Հարսանեկան հինայի երգ | Կոմիտաս. ԵԺ, հ. 9, N 82 (680/5), էջ 105 [թ.608/5] | Երևան, 1999, «Գիտություն» | Վաղարշապատ, 1907-1908 / Ակն | Կոմիտաս | ---- |
| 4. | Աղջի, հարսնառդ եկավ | Կոմիտաս. ԵԺ, հ. 11, N 40, էջ 36, [325տ/101] | Երևան, 2000, «Գիտություն» | Վաղարշապատ 1890,-1904 / Ակն | Կոմիտաս | ---- |
| 5. | Մեկ ձեռքդ հինայե | Թումաճան Մ. ՀԵուԲ, հ. 2, N 98, էջ 134: | Երևան, 1983, «Գիտություն» | ԱՄՆ, Ֆիլիպե, 1923 / Ակն Արմտան | Միհրան Թումաճան | Օվսաննա Օրմանյան, ծնվ. 1906 թ., Արմտան |
| 6. | Մեկ ձեռքդ հինա է | Թումաճան Մ. ՀԵուԲ, հ. 2, N 99, էջ 135 | Երևան, 1983, «Գիտություն» | ԱՄՆ, Նյու-Յորք, 1936 / Ակն Բինկյան | Միհրան Թումաճան | Վարդան Եղիկյան, ծնվ. 1897 թ., Բինկյան |
| 7. | Հինան էկավ, շաղեցեք | Թումաճան Մ. ՀԵուԲ, հ. 2, N 100, էջ 135 | Երևան, 1983, «Գիտություն» | ԱՄՆ, Ֆիլիպե, 1936 / Ակն Արմտան | Միհրան Թումաճան | Օվսաննա Օրմանյան, ծնվ. 1906 թ., Արմտան |
| 8. | Հինա դըրին | Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 2, N12, էջ 148 | Երևան 1971, «Գիտություն» | Նոր Նախիջևան | Մկրտիչ Լյուլեճյան | Մկրտիչ Լյուլեճյան, ծնվ. 1901թ., Նախիջևանի Չալթր գ., ուսուցիչ, բանահավաք |

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | Մեր հարսը խերով | Թումաճան Մ. ՀեուԲ, հ. 2, N 41, էջ 76-77 | Երևան 1983, «Գիտություն» | ԱՄՆ, Բոստոն, 1937, / Եդեսիա Ուռհա | Միհրան Թումաճան | Խաթուն Հյուսյան, ծնվ. Եդեսիա |
| 10. | Մի՛ լար մարիկ (Խաչերկաթ) | Թումաճան Մ. ՀեուԲ, հ. 2, N 170, էջ 183 | Երևան 1983, «Գիտություն» | ԱՄՆ, Նյու-Յորք, 1935-36 / Երզնկա | Միհրան Թումաճան | Վարդանուշ Թորոսյան, ծնվ. Երզնկա |
| 11. | Աղջիկ, մ'ըլ կը տանեն (Անամի) | Աճեմեան Յ. Հարսնաճղայ՝ հաւաքածոյ հայ ժող. երգերու Չմշկածագէն, N 1, էջ 16-17 | Փարիզ, 1955, imprimerie «Le Soleil» | Փարիզ / Չմշկածագ | Հովհաննես Աճեմյան / Ավետիք Մեսումենց | Սիրանուշ Աճեմյան-Մանոյան, ծնվ. Մամուսագ, Խոքբերդի Նահանգի Չմշկածագի գ. |
| 12. | Զարկիցեք սազիրե | Թումաճան Մ. ՀեուԲ, հ. 3, N 22, էջ 28-29 | Երևան 1986, «Գիտություն» | ԱՄՆ, Նյու-Յորք, 1930-35 / Տիգրանակերտ | Միհրան Թումաճան | Կիրակոս Զարզավաթճյան, ծնվ. Տիգրանակերտ |
| 13. | Ախչի՛, հարսնառ էկավ | Հայ ավանդական երաժըշ-տություն, հ. 13, Ա. Քոչա-րյանի գիտարշ. նյութերից ընտրանի, N 21, էջ 57 | Երևան, 2015, «Ամրոց գրուպ» | Երևան, 1939, գ. Աշոցք (Ղու-կասյան) / Սասուն | Արամ Քոչարյան / Մ. Տիգրանյան | Շահեն Սարգսյան (գուսան Շահեն), ծնվ. 1909 թ. Ղուրբուլաղ (այժմ՝ գ. Կրասար), նախն. Սասուն |
| 14. | Աղջի՛, հարսնառ էկավ | Հայ ժողովրդական երգեր և նվագներ, Անի, 1. հ, II գրակ, N 9, էջ 24 | Երևան 2010, «Կոմիտաս» | Մարալիկ, 1981, N127 / Անի | Խաչատուր Մարտիրոսյան | Պայծառ Մանուկյան, ծնվ. 1921 թ. Մարալիկ - Անի |
| 15. | Բալու քաղաք շինուեր է (Հինայումի երգ) | Ալահայտոյեան Պ. Բալուի երաժշտական ազգագրական հավաքածոյ, էջ. 205-206 | Կլենտեյլ, Գալի-ֆորնիա 2009, «Դրազարկ» | Սիրիա, Հալեպ, 1997 / Բալու | Ալահայտոյան Պետրոս | Մարո Նալպանտյան, ծնվ. 1936 թ., Հալեպ, նախն.՝ Բալու, 1910-ին մեկնել է ԱՄՆ |
| 16. | Ախչի՛, հարսնարդ էկավ (Ա) | Բրուտյան Ար. Ռամկական մրմունջներ, 1 հ., N 3 (89 Ա), էջ 25 | Երևան 1985, «Սովետական գրող» | ----- | Արշակ Բրուտյան | ----- |

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
|---|---|---|---|---|---|---|
| 17. | Ախչի, հարսնարդ էկավ (Բ) | Բրուտյան Ար. Ռամկական մրմունջներ, 1 հ., N 3 (89 Բ), էջ 25 | Երևան 1985, «Սովետական գրող» | ----- | Արշակ Բրուտյան | ----- |
| 18. | Աղջի՛, հարսնառ էկավ | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ արխիվ, Սպիտակ, գ. Թափանլի, 1975, N 172 | ----- | Սպիտակ, գ. Թափանլի, 1975 / Բասեն | Մարգարիտ Բրուտյան / Մ. Տիգրանյան | Բաբեյան Բաղչագյուլ (Բաղչո), ծնվ. 1905 թ. Թափանլի գ., նախն.՝ Բասեն |
| 19. | Աղջի՛, յարդ էկավ կալերեն | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ արխիվ, Կաբինետ, 1977, N 8 | ----- | Երևան, 1977 / Երզնկա | Մարգարիտ Բրուտյան / Մ. Տիգրանյան | Կարո Քաջունի, ծնվ 1909 թ. Երզնկա |
| 20. | Աղջի՛, հարսնառ էկավ | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ արխիվ, Արթիկ, 1985, N 12 | ----- | Արթիկ, 1985, Լուսակերտ / Կարս | Համիկ Էլոյան Աստղիկ / Սահակյան | Վիկտորիա Ուլկանյան, Անուշ Սարգսյան, ծնվ. 1901 թ., նախն.՝Կարս |
| 21. | Հինա դնելու երգ | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ արխիվ, Արտաշատ, 1976, N 102 | ----- | Արտաշատ, գ.Նոր-Դվին, 1976 / Արճեշ-Վան | Մարգարիտ Բրուտյան / Ալինա Փահլևանյան | Խանում Հարությունյան, ծնվ. 1902 թ., Արճեշ, գաղթել են 1914 թ. |
| 22. | Աղլամա, մերիկ, աղլամա | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ արխիվ, Երևան, 1988, N 21 | ----- | Երևան, 1988 / Ալաշկերտ | Մարգարիտ Բրուտյան / Մ. Տիգրանյան | Ասյա Հակոբյան, ծնվ. 1939թ., Արթիկի Պեմզաշեն գ. – Ալաշկերտ |
| 23. | Հինայ-նայ | Կիրակոսյան Ա. Իրանի Սպահանի շրջանի, Փերիա գավառի ժող. երգերի ընտրանի, N 15, էջ 40 | ԱՄՆ, Փասատենա, 1996, «Դրազարկ» | Երևան, 1983-1986 / Փերիա Պարսկահայ | Անահիտ Կիրակոսյան / Ղուկաս Պողոսյան | Ծատուր Զարգարյան, ծնվ.1942 թ., Փերիայի Սանգիբարան գ. |
| 24. | Հինայ - նայ (Ծանր պար) | ԳՆ ԵՊԿ-ի ՖԱՁ արխիվ, Լենինական (այժմ Գյումրի), 1984, N 145 | ----- | Լենինական, 1985 / Պարսկահայ | Անահիտ Կիրակոսյան / Ղուկաս Պողոսյան | Ասատուր Գրիգորյան, ծնվ. 1935, Ծուրիշկան գ. |

## N 1. Ծառի գովք[25]

Օրհնեալ է Յիսուս,
Օրհնեալ է Քրիստոս,
Խաչս բազմնեցաւ,
Ծառս բազմնեցաւ:

**հարց.**

– Ծաղկեցաւ ծառս կանանչ,
Ինչա՞ նման էր,
Լուսեղէն պտուղ տուաւ,
Ինչա՞ նմա էր:

– Այն ճեղքեր ալփին, ափին,
Ինչա՞ նման էր,
Լուսեղէն պտուղ առաւ՝
Ինչա՞ նման էր:

– Այն էգուան հովն էր հովեց,
Եւ աննման էր,
Աղուէնուն գելէր, մտնէր,
Ինչա՞ նման էր:

– Այն բախչէն, կանաչ բախչէն,
Ինչա՞ նման էր,
Ծով մը կար բախչի դուռը,
Ինչա՞ նման էր:

– Ղարղ եղաւ միջնածովին,
Ինչա՞ նման էր,
Այն աղբիւր որ ոտնագնաց,
Ինչա՞ նման էր:

– Այն աղբիւր որ մկրտեցին,
Ինչա՞ նման էր,
Ճեղքերն ամէն ալփին, ալփին՝
Եայվայ նման էր:

– Էն սեղան բարձրասեղան,
Ինչա՞ նման էր,
Էն հնձան, բոլոր հնձան,
Եայվայ նման էր:

– Այն խաչեր, բարձրախաչեր,
Ինչա՞ նման էր,
Բուրվառ ձեռք որ ժուռ կուգար՝
Ինչա՞ նման էր:

– Այն սալամ սար հնչելով,
Տեսէք այն ո՞րն է,
Էն կաքաւ կարկաչելով
Տեսէք այն ո՞րն է:

– Էն ճնճուղ ճըլվըտալով,
Տեսէք այն ո՞րն է.
Երկու ճնճուղ կանաչ բախչէն,
Տեսէք այն ո՞րն է:

**պատասխան.**

– Ծաղկեցաւ ծառս կանաչ,
Ինչա՞ նման էր,
Լուսեղէն պտուղ տուաւ,
Եայվայ նման էր:

– Այն ճեղքեր ալփին, ափին,
Աստուածածինն էր,
Լուսեղէն պտուղ առաւ՝
Տեր Միածինն էր:

– Այն էգուան հովն էր հովեց,
Առաքեալներն էր,
Աղուէնուն գելէր, մտնէր՝
Արդար հոգիքն էր:

– Այն բախչէն, կանաչ բախչէն,
Այն մեր դրախտն էր,
Ծով մը կար բախչի դուռը,
Այն էլ դժողքն էր:

– Ղարղ եղաւ միջնածովին,
Էն մեղաւորներն էր,
Այն աղբիւր որ ոտնագնաց՝
Գէտ Որդանանն էր:

– Աղբիւր որ մկրտեցին,
Սուրբ Կարապետն էր,
Ճեղքերն ամէն ալփին, ալփին,
Այն խնկէ ծառն էր:

– Էն սեղան բարձրասեղան,
Էջմիածինն էր,
Էն հնձան, բոլոր հնձան,
Էն Երուսաղէմն էր:

– Այն խաչեր, բարձրախաչեր,
Տէր քահանան էր,
Բուրվառ ձեռք որ ժուռ կուգար,
Այն սարկաւագն էր:

– Էն սալամ սար հնչելով,
Վարդապետն է,
Էն կաքաւ կարկաչելով,
Երիցաներն է:

– Էն ճնճուղ ճըլվըտալով,
Տիրացուներն է,
Երկու ճնճուղ կանաչ բախչէն,
Արդար հոգիքն է:

[25] *Քաջբերունի,* Հայկական սովորույթներ, ԱՀ, գ. 7 և 8, էջ 169-173:

– Արեգակ նոր շաղէշաղ,
Ինչա՞ նման էր,
Լուսնեակ նոր սարն ելաւ,
Ինչա՞ նման էր:

– Արեգակ նոր շաղէշաղ,
Այն թագուհին էր,
Լուսնեակ նոր սարն ելաւ,
Այն թագավորն էր:

## N 2. Թագվորի ծառագովք[26]

Յիսուսի Քրիստոսի սուրբ զօրութիւնով
Ծառս ծաղկեցաւ:

Սուրբ Կարապետի սուրբ զօրութիւնով
Ծառս ծաղկեցաւ:

Սուրբ Էջմիածնի սուրբ զօրութիւնով
Ծառս ծաղկեցաւ:

Սուրբ Լուսաւորչի սուրբ զօրութիւնով
Ծառս ծաղկեցաւ:

Սուրբ Երուսաղէմի սուրբ զօրութիւնով
Ծառս ծաղկեցաւ:

Սուրբ Նարեկացու սուրբ զօրութիւնով
Ծառս ծաղկեցաւ:

## N 3. Ծառ փնջելու պար[27]

Տղա. – Յէս բէրել էմ սիրուն ծառը,
Արէ՛ք, աշէծէ՛ք, ա րէ՛ք, աշէծէ՛ք.
Յէս բէրել էմ սիրուն ծառը,
Բէրէ՛ք, նըխշէծէ՛ք, բէրէ՛ք, նըխշէծէ՛ք:

Աղջիկ. – Պայծառ լուսին լուսը կուտա
Ծաղգած սարէրին, ծաղգած սարէրին.
Էն սարէրիծ ծիլ ու ծաղիգ
Մէր թակավօրին, մէր թակավօրին:

Տղա. – Ծառ էմ բէրէ կանաչ տէրէվօվ,
Քիշմիշը շարէ՛ք, քիշմիշը շարէ՛ք.
Քիշմիշնէրօվ, ալ վարտէրօվ,
Բէրէ՛ք, զարտըրէ՛ք, բէրէ՛ք, զարտըրէ՛ք:

Աղջիկ. – Գառան սուրուն կանանչ լանջերին,
Էն լանջէրին, կանանչ լանջէրին.
Էրտա՛նք բէրէնք ծիլ ու ծաղիգ,
Մէր թակավօրին, մէր թակավօրին:

Տղա. – Սիրուն ծառը, ջայէլ ծառը,
Կանանչ ճուղավօր, կանանչ ճուղավօր…
Թաժա հարսըն ու թակավօրը,
Աբրին բախտավօր, աբրին բախտավօր:

Աղջիկ. – Գարնան մօղիգ վարտ ու ծաղիգ
Գըբացվին, գըբացվին.
Բիլբուլնէրի ձէնը
Անուշ գըլըսվին, անուշ գըլըսվին:

Տղա. – Դավուլ, զուռնէն, զարգէ՛ք, չալէ՛ք,
Ջայէլնէր կանչէ՛ք, ջայէլնէր կանչէ՛ք.
Սիրուն ծառը կանանչ ճուղօվ
Զարտըրէ՛ք, փնջէ՛ք, զարտըրէ՛ք, փնջէ՛ք:

Աղջիկ. – Ամէն ծառնէր բար էն տալըմ,
Անուշ բար տալըմ.
Էն ծառնէրիծ ծիլ ու ծաղիգ
Մէր թակավօրին, մէր թակավօրին:

Տղա. – Արէ՛ք, մէրէր, քուրէր,
Ձէր խաղը խաղծէ՛ք, ձէր խաղը խաղծէ՛ք,
Ծառը կանանչ, ճյուղէրը շատ,
Ըսէք՝գօվածէ՛ք, ըսէք՝գօվածէ՛ք:

Աղջիկ. – Էրտամ սարին, ման գամ ձօրին,
Ծիլ ու ծաղիգ մէր թակավօրին, մէր թակավօրին,
Էրտամ հանդին, էրտամ բէրին,
Ծիլ ու ծաղիգ մէր թակավօրին, մէր թակավօրին:

Տղա. – Արէ՛ք, տէսէ՛ք փընջած ծառը,
Սիրուն, աննման, սիրուն, աննման…
Թաժա հարսը թակվօրի հէդ,
Կապրին հավիդյան, կապրին հավիդյան:

Աղջիկ. – Հէծան ձիան, հէծան ջօրին,
Ծիլ ու ծաղիգ մէր թակավօրին, մէր թակավօրին,
Բանձըր սարիծ, էն սարդարիծ.
Ծիլ ու ծաղիգ մէր թակավօրին, մէր թակավօրին:

Տղա. –Կարմիր խընձոր, կանանչ ճուղէր,
Մէր փընջած ծառին, մէր փընջած ծառին,
Զարտարած ծառը մէր թակավօրին,
Մէր թակավօրին, մէր թակավօրին:

---

[26] *Քաջբերունի,* նույն տեղում:
[27] *Лисициан С.,* Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 2, N 4, с. 404-407:

## N 4. Ծաղկեցավ ծառս կենաց[28]

– Ծաղկեցավ ծառս կենաց,
Տեսեք, այն ո՞րն է.
Բազմեցավ խեչն ի գլխուն
Տեսե՛ք, այն ո՞րն է:

– Ծաղկեցավ ծառս կենաց՝
Էն թագավորն է.
Բազմեցավ խեչն ի գլխուն՝
Էն յուր պսակն է:

– Այն խնձոր, գլխախնձոր,
Տեսեք, այն ո՞րն է,
Այն խնձոր, գլխախնձոր,
Տեսեք, այն ո՞րն է:

– Այն խնձոր, գլխախնձոր՝
Թագավորահայրն է.
Այն խնձոր, գլվագլոր՝
Այն ազափներն է:

– Այն խնձոր՝ աջ աթոռին,
Տեսեք, այն ո՞րն է,
Այն խնձոր՝ձախ աթոռին,
Տեսեք, այն ո՞րն է:

– Այն խնձոր՝ աջ աթոռին,
Այն խաչեղբայրն է.
Այն խնձոր՝ձախ աթոռին,
Էն թագուհին է:

– Այն չոբան, բարձրաչոբան՝
Եվ աննման էր,
Հրեղեն թուրն է ձեռին՝
Ինչ աննման էր:

– Այն չոբան բարձրաչոբան՝
Այն հարսեղբայրն էր,
Հրեղեն թուրն ի ձեռին՝
Այն խաչեղբայրն էր:

– Այն երկինք, որ ամպ ու պարզ
Եվ աննման էր,
Երկու հավք, որ տետետափ,
Ինչ աննման էր:

– Այն երկինք, որ ամպ ու պարզ՝
Այն խնամտիք էր,
Երկու հավք, որ տետետափ՝
Խնամտոց խոսքերն է:

– Այն խնձոր, գլխախնձոր՝
Էն ազափներն է,
Փունջ մանուշակ, որ ծաղկեցավ՝
Էն աղջիկներն էր:

– Էն փտած կոճն ի որմին,
Տեսեք էն ո՞րն է,
Էն կարաս, գլվագլոր,
Տեսեք, էն ո՞րն է:

– Այն խնձոր, գլվագլոր,
Ինչ աննման էր,
Փունջ մանուշակ, որ ծաղկեցավ
Եայվա նման էր:

– Էն փտած կոճն ի որմին՝
Հալևորներն է,
Էն կարաս՝ գլվագլոր՝
Պառավներն է:

– Շունն էկավ պարկն ի բերան,
Տեսեք էն ո՞րն է,
Շունն էկավ պարկն ի բերան՝
Գեղի գզիրն է:

## N 5. «Ծառագովք»-ի ավարտին[29]

Գնացէ՛ք, ասէ՛ք,
Թա՛գւորահէր,
Թա՛գւորահէր,
Ծառդ գոված է.
Եզ մի խորվու,
Տիկ մի գինի,
Ծառ գովողինն է:

Գնացէ՛ք, ասէ՛ք,
Թա՛գւորամէր,
Թա՛գւորամէր,
Ծառդ գոված է.
Սել մի սեղան,
Խոյ մը խորվու,
Ծառ գովողինն է:

Գնացէ՛ք, ասէ՛ք,
Թա՛գւորահարս,
Թա՛գւորահարս,
Ծառդ գոված է.
Չորս ջուխտ գուլպայ,
Մի մահրամայ,
Ծառ գովողինն է:

---

28 *Քաջբերունի,* Հայկական սովորույթներ, ԱՀ, գ. 7-8, էջ 175:
29 Հազար ու մի խաղ, II յիսնեակ, էջ 85-86:

Գնացէ՛ք, ասէ՛ք,
Թա՛գւորաղբէր,
Թա՛գւորաղբէր,
Ծառդ գոված է.
Երկու ճնճուղ,
Մէկ գարէ հաց,
Ծառ գովողինն է:

Գնացէ՛ք, ասէ՛ք,
Թա՛գւորաքուր,
Թա՛գւորաքուր,
Ծառդ գոված է.
Ոլ մի խորվու,
Գաւ մի գինի,
Ծառ գովողինն է:

Գնացէ՛ք, բերէ՛ք,
Սիրով սեղան,
Գաւով գինի,
Ջուխտ գաթաներ,
Նախշուն գուլբէք,
Ծառ գովողին
Խալաթ տուէք:

## N 6. Թա՞գւոր, ի՞նչ բերեմ քեզ նըման[30]

Թա՞գւոր, ի՞նչ բերեմ քեզ նըման, -
Քո կանաչ արև քեզ նըման.
Անթառամ՝ ծաղիկ, որ կը ծաղկի,
Ծաղկէր քո արևուդ նըման:
…
Բալասան ծաղիկ, որ կը ծաղկի,
…
Համասփիւռ ծաղիկ, որ կը ծաղկի,
…
Գիներբուկ ծաղիկն, որ կը ծաղկի,
…
Սիրուն մանուշակ, որ կը ծաղկի,
…
Գարնան վարդենիս, որ կը ծաղկի
Ծաղկէր քո արևուդ նըման:

…
Անուշ ռեհան, որ կը հոտէր,
Անուշ բուրեր քո թագուհին:
…
Շուշան ծաղիկ, որ կը հոտէր,
Անուշ բուրեր քո թագուհին:
…
Նարգիզ ծաղիկ, որ կը հոտէր,
…
Դեղին կակաչ, որ կը հոտէր,
…
Սարի սոսուն, որ կը հոտէր,
…
Աղբրանց-արիւն, որ կը հոտէր,
…
Ոսկեծաղիկ, որ կը հոտէր,
Անուշ բուրեր քո թագուհին:

## N 7. Թագվորի ծառագովք[31]

– Թագւոր, ամէ, կիչ  կիտէյայ
Որ քոյ ծառին, հա՛յ, գովքն ասէյանք:
– Գնացէք, բերէք խօսան պիլպիլն,
Որ գայ, գօվէ, հա՛յ, ծառս ու ծաղիկ:

Գնացին, բերին խօսան պիլպիլն,
Էրնեկ մտաւ, հա՛յ, ի դարպասին,
Էրնեկ մտաւ ի դարպասին,
Բարև երետ, հա՛յ, թագաւորին,
Բարև երետ թագաւորին,
Հազար բարին, հա՛յ, իր խեչ մանկտացն:

Մենք էն պիլպիլին հետ կէհէյանք,
Երբ մուտն յընկնէր, հա՛յ, հոն պառկէյանք,
Երբ մուտն յընկնէր, հոն պառկէյանք,

– Թագւոր, ամէ, կիչ  կիտէյայ,
Որ քոյ ծառին, հա՛յ, գովքն ասէյանք:
– Գնացէք, բերէք եղնիկ դաշտէն,
Որ գայ, գովէ, հա՛յ, ծառս ու ծաղիկ:

Գնացին, բերին եղնիկ դաշտէն,
Էրնեկ մտաւ, հա՛յ, ի դարպասին,
Էրնեկ մտաւ ի դարպասին,
Բարև երետ, հա՛յ, թագաւորին,
Բարև երետ թագաւորին,
Հազար բարին, հա՛յ, իր ծաղկունացն:

Մենք էն դաշտին մեջ կէհէյանք,
Երբ մուտն յընկնէր, հա՛յ, հոն առկէյանք,
Երբ մուտն յընկնէր հոն պառկէյանք,
Մեծ աստուծոյ, հա՛յ, փառս տայանք:

– Թագւոր, ամէ, կիտէյայ,
Որ քոյ ծառին, հա՛յ, գովքն ասէյանք:
– Գնացէք, բերէք գառն արեգոյն,
Որ գայ, գովէ, հա՛յ, ծառս ու ծաղիկ:

– Թագւոր, ամէ, կիչ կիտէյայ,

---

30 Հազար ու մի խաղ, II յիսնեակ, էջ 77-80:

31 Ձեռագիր N 8064, թերթ 22բ –24ա, ժողովածու, թուղթ (մագաղաթյա), 1835 թ., Նալպանտ գյուղ, գրիչը՝ Ալեքսանդր. հրատարակված է Մատենադարանի գիտական նյութերի ժողովածուի N 2-ում, 1950, էջ 201-204:

Գնացին, բերին գառ արէգոյն,
Էրնեկ մտաւ, հա՛յ, ի դարպասին,
Բարև երեւ, հա՛յ, թագաւորին,
Բարև, երեւ թագաւորին,
Հազար բարին, հա՛յ, իր խէչ մանկտացն:

Մենք էն գառին հետ կէհէյանք,
Երբ մուտն յընկնէր, հա՛յ, հոն պառկէյանք,
Երբ մուտն յընկնէր, հոն պառկէյանք,
Փունճ մանուշակ, հա՛յ, խոտն արծէյանք,
Փունճ մանուշակ հա՛յ, ռրօճէյանք:

– Թագւոր, ամէ, կիտէյայ,
Որ քոյ ծառին, հա՛յ, գովքն ասէյանք:
– Գնացէք, բերէք քօշն ի քարեն,
Որ գայ, գովէ, հա՛յ, ծառս ու ծաղիկ:

Գնացին, բերին քօշն ի քարեն,
Էրնեկ մտաւ, հա՛յ, ի դարպասին,
Էրնեկ մտաւ ի դարպասին,
Բարև երեւ, հա՛յ, թագաւորին,
Բարև, երեւ թագաւորին,
Հազար բարին, հա՛յ, իր ծաղկունանցն:

Մենք էն քօշին հետ կէհէյանք,
Երբ մուտն յնկներ, հա՛յ, հոն պառկէյանք,
Երբ մուտն ընկներ հոն պառկէյանք,
Ի քար գօտուն, հա՛յ, թռտատէյանք,
Ի քար գօտուն թռտատէյանք,
Մեր Տէր Աստծոյն փառս տայանք:

Որ քոյ ծառին, հա՛յ, գովքն ասէյանք:
– Գնացէք, բերէք արդար մեղուն,
Որ գայ, գովէ, հա՛յ, ծառս ու ծաղիկ:

Գնացին, բերին արդար մեղուն,
էրնեկ յիջաւ, հա՛յ, ծառատըկին,
էրնեկ յիջաւ ծառատըկին,
Ժուռ մանէման, հա՛յ, ք էրնեկ ծառին,
Ժուռ մանէման էրնեկ ծառին,
Բարև երեւ, հա՛յ, թագաւորին,
Բարև, երեւ թագաւորին,
Հազար բարին, հա՛յ, իր խօշ բախտին:

Մենք էլ մեղուին հետ կէհէյանք,
Երբ մուտն ընկներ, հա՛յ, հոն պառկէյանք,
Երբ մուտն ընկներ հոն պառկէյանք,
Քաղցր ծաղկունքըն, հա՛յ, ժողովէյանք,
Քաղցր ծաղկունքն ժողովէյանք,
Քաղցրաճաշակ մեղր շինէյանք,
Եւ մոմն աստծոյ, հա՛յ, փէշքեաշ տայանք:

– Թագւոր, ամէ, կիչ կիտէյայ
Որ քոյ ծառին, հա՛յ, գովքն ասէյանք,
Թագւոր, քոյ ծառտ էր խնկենի,
Էր խնկենի, հա՛յ, արմաւենի,
Թագւոր, քոյ ծառտ էր նշենի,
Էր նռնենի, հա՛յ, մորենի,
Էր նռնենի, հա՛յ, էր խնծորենի...

## N 8. «Բեւ դիզան ...»[32]

– Բեւ դիզան, բեւ-բեւ դիզան, տեսեք, էն ո՞րն ա:
– Բեւ դիզան, բեւ-բեւ դիզան՝ էն գեղի ռեսն ա:
– Խարխռներ խարխռալին, տեսեք, էն ո՞րն ա:
– Խարխռներ խարխռալին՝ վարդապետներն ա:
– Կագվներ գվգվալին, տեսեք, էն ո՞րն ա:
– Կագվներ գվգվակին՝ գեղի հարսներն ա:
– Ճնճղներ ճլվլալին, տեսեք, էն ո՞րն ա:
– Ճնճղներ ճլվլալին՝ գեղի աղջիկներն ա:
– Շուն էկավ պարկն ի բերան, տեսեք, էն ո՞րն ա:
– Շուն էկավ պարկն ի բերան՝ գեղի գզիրն ա:

## N 9. Թագւորագովք[33]

[32] Էմինեան ազգագրական ժողովածու, հաւաքեց Ս. Հայկունի, h. Ձ, էջ 35:

(հարսանեկան երգեր)

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորամէր,
Որ գայ, նըստէ, դարբաս անէ,
Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,
Հրամէ բարին մեր թագւորին:
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորահէր,
Որ գայ, բանայ դուռ մաղազին,
Հանէ զխպչփոկ նոր, պահունի,
Բերէ, բաշխէ մեր թագւորին:
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորամամ,
Որ գայ, նըստէ դարբաս անէ,
Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,
Հրամէ բարին մեր թագւորին:
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորապապ,
Որ գայ, նըստէ դարբաս անէ,
Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,
Հրամէ բարին մեր թագւորին:
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորաղբէր,
Որ գայ, նըստէ դարբաս անէ,
Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,
Հրամէ բարին մեր թագւորին:
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորաքոյր,
Որ գայ, նըստէ դարբաս անէ,
Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,
Հրամէ բարին մեր թագւորին:
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորքաւոր,
Քառսուն քիսայ առնէ, բերէ,
Այս թագ գընէ, առնէ, տանէ,
Բարէ, բաշխէ մեր թագւորին:
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէ՛ք, բերէ՛ք կռունկն ի չօլէն,,
Որ գայ, նըստէ սէյրան անէ,
Ծընկիկ դընէ սուրբ սեղանին,
Աստծո բարին մեր թագւորին:
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէ՛ք, բերէ՛ք բադն ի գեօլէն,
Որ գայ, նըստէ սէյրան անէ,
Ծընկիկ դընէ սուրբ սեղանին,
Աստծո բարին մեր թագւորին:
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէ՛ք, բերէ՛ք կաքաւ քարէն,
Որ գայ, նըստէ սէյրան անէ,
Ծընկիկ դընէ սուրբ սեղանին,
Աստծո բարին մեր թագւորին:
Աստուած շնորհաւո՛ր անէ:

## N 10. Տաղ ուրախութեան ի վերայ աղվեսին[34]

Աղուեսն կու գայր ի լեռնէն ի վայր
Եւ գայր, իջնուր երդիքն ի վայր.
– Ինձ մեծ-մեծ հաւ պիտի ու գեր: –
Սիրո՜ւն աղուես, ագին՝ ծաղիկ:

Աղուեսն նստեր քարին անխօս.
– Ուսայ, եղայ մարմնովս պիրոս.
Ինձ կու պիտի կարմիր խօրօս: –
Սիրո՜ւն աղուես, ագին՝ ծաղիկ:

Աղուեսն հագեր լուրջ ու դեղին,
Ի շուրջ կու գայ բոլոր գեղին,
Աչք է դրել մամկայ եղին.
Սիրո՜ւն աղուես, ագին՝ ծաղիկ:

Աղուես նստեր վերայ դիզին,
Ձագին կըռեր վերայ վիզին,
Աչք է դրեր մամկայ ընկզին.
Սիրո՜ւն աղուես, ագին՝ ծաղիկ:

Աղուեսն հագեր քուրքով մուշտակ.
– Ուսայ, եղայ մարմնով հրեշտակ,
Ինձ կու պիտի ժամու շուշտակ: –
Սիրո՜ւն աղուես, ագին՝ ծաղիկ:

Աղուեսն ասաց վարդապետին.
– Զքեզ տի հանեմ վերայ փայտին,
Անցուցանեմ այն դին գետին: –
Սիրո՜ւն աղուես, ագին՝ ծաղիկ:

Ով աղուեսակ, փոքրիկ գազան,
Ոտերըն կարճ ու խիստ վազան,

[33] Հազար ու մի խաղ, II յիսնեակ, էջ 65-67:

[34] *Մնացականյան Ա.,* Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, «Գիտություն» հրատ., 1956, էջ 379-380: Առաջին անգամ տպագրվել է՝ *Կոստանյան Կ.,* Նոր ժողովածու, Ա. պրակ, Թիֆլիս, 1892, էջ 45-46 (Ձեռագիր N 777, թերթ 208բ – 209 ա, ժամանակ՝ 1695 թ.):

Շըներն ամէն քեզ չի հասան,
Սիրո՛ւն աղուես, ագին՝ ծաղիկ:

## N 11. Աղվես-աղայի երգը[35]

Քեմենչեջի
– Լղճած Աղվես, վուստի՞ կուկաս,
Ավջությունդ վախիմ չայնաս,
Սարթ շները մեյդոն էլոն,
Խնամդոնքը նստած գուլոն:

Աղվես աղա
– Տղուն տիեն ճամփաս կուկա,
Հավ ուդող իմ շաքա-մաքա,
Սարթ շներեն չիմ վախիլնա,
Բոչս ինծի բիդու կուկա:

Քեմենչեջի
– Թորես, Բողես, լավ աշեցեք,
Հավու բունին մոդ գոյնեցեք,
Հավտուշ չելիլ թիլքուն շեյթոն,
Հոգին գառնու մեծ խորոզոն:

Մի հարսանքավոր
– Էրգըն բոյով շալգիդ բոխչըն
Ցած դիր աշինք:
Մեք ալ դեսնունք
Ինչ բերած ես խնոմդացմոն:

Աղվես աղա
– Բոխչան դալ չիմ՝ բաշխըշ չառած,
Մեջը լիքն է թոնգ բոներով,
Խնոմտացոց նվերներով՝
Հինա, շապիկու լավաշով:

Քեմենչեջի
– Աղվես, աղվես օներես,
Հերքա գու հավին դոնջես,
Հավին դեղը քյասուլիկ
Բաշխըշ աղջիկ կտանես:

Աղվես աղա
– Ես աղվես եմ պատվավոր,
Հավ ուդուշի միշտ սովոր,
Քու բես քեմենչեջի չիմ.
Ոսկոր կրծող իս, ոսկոր:

Քեմենչեջի
– Աղվես, աղվես խեդուդիկ,
Նըլլեթ քու ծուռ բիչումիդ
Վախիմ մոռցար էշտուշըդ,
Թքե շունը մունծուռիդ:

## N 12. Հա՜յ, աղվսիկ[36]

Հո՜յ, նար, ջանըմը նա՜ր,
Հո՜յ, նա՜ր, ջանըմը նարե,
Հո՜յ, նար, ջանըմը նար:

Հո՜յ, աղըվըսիկը, վըսիկը, վըսիկը,
Հո՜յ, նա՜ր, ջանըմը նարե,
Հո՜յ, նար, ջանըմը նար:

Աղվեսըն էկավը վերինը թաղենը,
Հո՜յ…
Մածուն կերավ, թափավը վերենը,
Հո՜յ…
Աղվեսն եկավ դափիկը-մափիկը,
Հո՜յ…
Եկավը, մըտավը մեր կանափիկը,
Հո՜յ…
Աղվեսն նըստե վեր տախտըկին,
Հո՜յ…
Պոչն ի տընկե դեխ տանտիկին,
Հո՜յ, նա՜ր, ջանըմը նարե,
Հո՜յ, նար, ջանըմը նար:

---

[35] Գրի է առել Հարություն Գալայճյանը՝ միայն տեքստը: Զետեղված է «Հարսանեկան երգեր» բաժնում՝ Ձայն համշենական, կազմող՝ Սերո Խանզադյան, Երևան, «Հայաստան», 1971, էջ 69-70:
[36] *Թումաճան Մ.*, ՀեուԲ, հ. 4, N 191, էջ 234 (բանասաց՝ Տիգրան Չիթունի):

## N 13. Թութուն[37]

Էսօր չորս օր թութուն չ'ունիմ:
Կը մտածեմ կիման չունիմ,
Վառայ անթութուն, անթութուն:
Հուռութենեն թութուն քացի,
Սև հողեր գլխուս քաշի,
Վառայ անթութուն, անթութուն:
Երկու արտ ցանի թութուն,
Կարկուտ էկաւ տարաւ պիթուն,
Չ'թոկեղ մէկ տամաթ թութուն՝
Վառայ անթութուն, անթութուն:
Երկու արտ ցանի գարի,
Ի՞նչ իմանամ կարկուտ տանի,
Պալքիմ թութնի գին կը հանի,
Վառայ անթութուն, անթութուն:

Լօթի կեոտեք դրած ան ֆաս
Իրուր կ'էնեն թութունի պա'ս,
Իրոր կ'ըսեն «նաֆաս մի տաս»՝
Վառայ անթութուն, անթութուն:
Թութուն քաշող սիրտ կը խզայ,
Չունեցող կայնի մզայ,
Ձեռ կ'էրկնցու մէկ հատ կո՛ւգայ.
Վառայ անթութուն, անթութուն:
Թութնի քաշել ինչքա՞ն լաւ ա.
Առանց քաշել սիրտ կը ցաւայ.
Թութուն ա մաճլիսի մազա.
Վառայ անթութուն, անթութուն:
Ես Մխօն էնք Ալաշկերտցի,
Սէլ լծի թութնի գացի,
Թութուն չէղաւ, նստայ լացի,
Վառայ անթութուն, անթութուն:

## N 14. Լուրկե[38]

Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Սանիկդ գրկե,
Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Ջանիկդ գրկե:
Օջախը վառեմ՝ ձու խաշեմ,
Էրեսիդ խալին աշեմ:
Կարմին գինին մազա էր,
Յարիս շուշպեն թազա էր:
Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Սանիկդ գրկե,
Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Ջանիկդ գրկե:

## N 15. Լուրկե[39]
(Ալաշկերտ)

Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Խանըմ է լուրկեն,
Դու կայնել էս Վրթոյ տանիս,
Ջանըմ է լուրկեն,
Ոչ կդատիս, ոչ կբանիս.
Խաթուն է լուրկեն,
Առանց գրող խոքիս կառնիս,
Խանըմ է լուրկեն:

Հե՛յ լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Խանըմ է լուրկեն,
Աղջի, էդ քո վզի վզնոց,
Խաթուն է լուրկեն,
Ինձ էրերեց, ինձի մրկեց,
Խանըմ է լուրկեն,
Մեկ օր սրտով ինձ չգրկեց,
Խաթուն է լուրկեն:

---

[37] *Նժդեհեան Գ. քհ.,* Ալաշկերտի ազգագրութիւն, ԱՀ, գ. 7 և 8, էջ 454:

[38] Հայ ազգագրություն, բանահյուսություն, հ. 9, Երևան, «Գիտություն» հրատ., 1978, N 200, էջ 109: Գրի է առնվել Էջմիածնի շրջ. Այգեշատ գյուղում 1926-31 թթ., գրի առնող՝ Աստղիկ Նաջարյան, ծնվ. Էջմիածին, 1907 թ.:

[39] Հայ ազգագրություն և բանահյուսություն, կազմ.՝ Ռոզա Գրիգորյան (Գեղարքունիք), հ. 14, N 17, էջ 196: «Պարերգ» բաժինը ձայնագրվել է Գեղարքունիքում, 70-ականների սկզբին::

# ԲԱՌԱՐԱՆ

| | |
|---|---|
| Աբրեշում, էբրեշում | մետաքս |
| Ալ | 1. ընտանիք<br>2. վարդագույն, կարմրագույն |
| Ալոք | 1. ընտանիքով<br>2. կարմիր հագած |
| Աղապապ | ընքապապ, կեսրայր |
| Աղբին, աղպեն | բարի բախտ, բարեբախտություն |
| Աղլամա (թրք.) | լացերգ |
| Աղլուխ (յայլուխ) | գլխաշոր, լաչագ, ձեռքի թաշկինակ |
| Աղվընիք | աղավնիներ |
| Աղվըսիկ (աղվես) | փեսի կողմից հարսի տուն հրավեր բերողը |
| Աղվոր | գեղեցիկ |
| Աղուէնուն գելեր | աղվենի (աղավնի) գելեր (փխբ.) |
| Ամմե | հորաքույր |
| Անամ (թրք.) | մայր |
| Անամի | հարս գնացողների գովք, լացերգ |
| Ապտոտա Պեքիր | տղամարդու մականուն |
| Առուսե | հարսնացու (Արուսյակ - Վեներա) |
| Ավջություն | որսորդություն |
| Արխալուղ | կանանց և տղամարդկանց մինչև ծնկները հասնող, առջևից կոճկվող հագուստ |
| | |
| Բաղնվոր, բաղնեվոր | բաղնիք գնացող |
| Բալըդցար | իմացար, սովորեցիր |
| Բաղլամա | կիսով բուռ լցված հացահատիկ (թրք.) |
| Բաշի (թրք.) | գլուխ |
| Բաշխ, բաշլըղ | փեսայի կողմից հարսին ուղարկած նվերներ |
| Բաս | զրույց, խոսակցություն |
| Բեդավե (թրք.)<br>Բեդավը / bedava | անվճար, անվարձ, անհատույց, ձրի |
| Բիզում | ձև, ձևիդ |
| Բիթուն | բոլոր, ամբողջ |
| Բլբուլ | սոխակ |
| Բողես | Պողոս (ար. անձնանուն) |
| | |
| Գազէթ | թերթ (газета), լրագիր |
| Գալոս | տղամարդու անուն՝ Գալուստ |
| Գացեք | գնացեք |
| Գըռունկ | կռունկ |
| Գյոռբագյոռ (թրք.) | շանսատակ, մեռնելուց հետո էլ հոգին հանգիստ չունենա, դիակը անարգել, գերեզմանից գերեզման տեղափոխել |
| Գոյնեցեք | կանգնեցեք |
| Գոշտ | միս |
| | |
| Դամոն | սալոր, դամբուլ |
| Դարպաս անե, դարպասխանե | գալ ներկայանալ թագվորին, նորափեսային ողջունել |
| Դեխ | դեպի |
| Դերիվ | տերև |
| Դիբ ուռուսէթ | ճիշտ ռուսական |
| Դիկ, դիկլօզ | աքլոր |

| | |
|---|---|
| Դոնջել | տանջել, չարչարել |
| Դուման | մառախուղ, թուխպ |
| Դրկեյ, դրկեց | դրկից, մոտ |
| **Ե**ախութ, յաղութ | թանկարժեք քար |
| Եդոք | հետո |
| **Զ**ագի | ագին, պոչը |
| Զանց | քան |
| Զառջի | առաջին |
| Զթաղսին – թախսի | կացին |
| Զիլիֆ, զըլիֆ, զիլֆիկ | մազ, վարս, ճակատի վրայի խոպոպներ |
| Զմրութ | զմրուխտ |
| Զոզան | լեռնային արոտավայր, յայլաղ |
| Զուբարա | գյուղական դպրոցին, եկեղեցուն և առանձին գյուղացիներին հանրային օգնություն՝ գյուղատնտեսական աշխատանքներն ավարտին հասցնելու համար: Զուբարան անցկացվում էր կամավոր սկզբունքով, զուռնա-դհոլով, որպես տոնախմբություն |
| **Է**շտուշ | երդում |
| Էպյուրշյուն, էպիրշում, | մետաքս (աբրեշում) |
| Էսիկի | ասիկա, այս |
| Էր՚ ընծի հալալ | ինձ հալալ արա, հալալ լինի |
| Էրգըն, էրգան | երկայն, երկար |
| Էրիկ | ամուսին |
| Էրկովս | ամուսնուս հետ |
| **Թ**ամաշէն, թամաշա | տեսարան, տոնախմբություն, հանդես |
| Թա̈ղ | դեպի |
| Թեզ, թեզքով | շտապ, արագ |
| Թէփսի (թեփշի, թեբսի) | պնակ, ափսե |
| Թ'իգան | թող գան |
| Թոնգ | թանկ, արժեքավոր |
| Թոռ | քնքուշ |
| Թորես | Թորոս (ար. անձնանուն) |
| Թորվան | թոնիր |
| Թոփն ու դերիվ | թուփն ու տերևը |
| **Ժ**ուռ գալ (ժուռ ու մուռ) | ման գալ, շրջել, զբոսնել |
| Ժուռ մանէման | ման գալ, շրջագայել, զբոսնել |
| **Ի**յնա | ընկնի |
| Ինկավ | ընկավ |
| **Լ**ագլագ | արագիլ |
| Լաթ | շոր, զգեստ |
| Լորիկ | կնոջ անուն, թռչուն |
| Լոթի, լօթի | տղա, երիտասարդ (պարծենկոտ) |
| Լօթի կեոտեք դրած ան ֆաս | տղաները կրել են ֆէս, գլխարկ |
| **Խ**աթ, ղաթ | հագուստ, կտոր, մաս, ծալք |
| Խալան | օժիտ |
| Խալե | մորաքույր (թրք.՝ հալա) |

| | |
|---|---|
| Խամրեմ, խամրել | հաշվել |
| Խայիը կնայե | հոգ տանել, հոգատար լինել |
| Խաթուն | հարգարժան տիտղոս կնոջ համար, տանտիկին, տիրուհի |
| Խաննա | հինա, խնա (ներկանյութ) |
| Խանում | տիրուհի, տիկին, տան մեծ կին (խանում-խաթուն) |
| Խեդուդիկ | խատուտիկ |
| Խընայե | խնայել, հոգալ |
| Խնամդոնք | խնամիներ |
| Խորաթե | խոսել, զրուցել |
| Խուդդում, խուդդրել | խուտակալել |
| Խօրօս | խորոզ, աքաղաղ |
| **Ծ**ծագին | խալան, հարսի համար վճարվող այն գումարը, որը տրվում է հատուկ հարսնացուի մորը |
| Ծնրիկ (ծնդրիկ) զարկե | ծունր գալ, ծնկի գալով խոնարհվել |
| **Կ**ամիշ, դամիշ | նուրբ, բարակ |
| Կանափիկ | բազմոց |
| Կանափիկ, կանափոց | կանեփի արտ |
| Կացեք | գնացեք |
| Կարկ | մոլոր |
| Կըլկալ, կլկալ | մեջտեղը ծակ կլոր հաց՝ բոքոնի ձևով, որ թխում են նոր տարուն և անց են կացնում լծկանների եղջյուրներին, որպեսզի շտեմարանները միշտ լիքը լինեն և հորը լցվի ցորենով: |
| Կիտէյայ | կիտի, պիտի, պետք է |
| Կիման | հույս |
| Կյըլուխ, կյըլօխ | գլուխ |
| Կյըներպուկ | գինարբուկ (բսբ.) |
| Կնամիշ, գնամիշ | պարտավորվել |
| Կոճակ | ծառերի վրայի գարնանային բողբոջը |
| Կոյրեցավ | կոտրվեց |
| Կորընկյան, կորեկնոց | կորեկ ցանած արտ |
| Կու ցաթե | կշողա |
| Կուման, կումանա | խումբ, խմբովի |
| **Հ**ալվորի | հալվորել, ալևորել, ծերանալ |
| Համբեք, համփեք | հարուստներ, ունևորներ |
| Հաղլիկ | խաղ, չար կատակ |
| Հալևոր | ալևոր, ծեր, մեծահասակ |
| Հեկեկար | հեկեկալ, լաց լինել |
| Հերես | արական անձնանուն |
| Հուռութենեն | անզուսպ կիրք ունենալ |
| Հուսկիցեք | հյուսեցեք, հյուսեք |
| **Ձ**առ | ծառ |
| **Ղ**անաուզ | մետաքսե կտոր |
| Ղարիբ | օտար |
| Ղարղ, ղառղառ | ագռավ |
| Ղութուն, ղութնի | ներքնակի երիզավոր երեսացու կտոր |
| Ղուրուշ | տաճկական դրամ, մանրադրամ: |
| **Ջ**նդրիկ (ծնրիկ) | ծունր գալ, ծնկի գալով խոնարհվել |

| | |
|---|---|
| Ճեվեհիր, ջավահիր | թանկարժեք քար, գոհար |
| Ճլոլանք | չոր մրգերից շարաններ |
| Ճնդրիկ (ծնրիկ) | ծունր գալ, ծնկի գալով խոնարհվել |
| Մահրամայ | աղլուխ, թաշկինակ (տաճկ.՝ mahrama) |
| Մաճ գիկեր | հպարտ քայլել |
| Մաճլիս, մեջլիս | ժողով, խնջույք |
| Մայիլ | կարոտ |
| Մասաբ ու դինը | կրոնը ու հավատքը |
| Մեյդոն | մեյդան, բաց տեղ, շուկա, հրապարակ |
| Մզայ, մզալ | կովի, եզան բարակ ձայն հանել |
| Մընտկի | մականուն |
| Մունձուռ | դունչ |
| Մուտ | մայրամուտ, արևի մայր մտնելը, մութ |
| Յա՝ վաղը | կամ՝ վաղը |
| Յեմ | իմ |
| Յոթ օդա | յոթը տուն |
| Յոթ օքմեն (ոքմեն) | յոթը հոգով |
| Նահլաթ | անէծք |
| Նան | հաց |
| Նարոտ | կանաչ և կարմիր մետաքսե թելերից ոլորված քուղ (ծիսական) |
| Նաֆասըն, նաֆաս | շունչ, շնչել, արտաշնչել (թութուն քաշել) |
| Նենե | նանի, տատի |
| Նըլլեթ | անեծք |
| Նըռվինու | նռնենի (բսբ.) |
| Շախտեն, շախտա | սաստիկ ցրտից հետո փչող տաք քամին, որը վնասում է թփերը (խաղող, թութուն) |
| Շեյթոն, շայթան | սատանա |
| Շիկել, շքել | պատրաստել, շինել |
| Շոքերիս | շոքի երեսից, շոքի պատճառով |
| Ործագ, ործակ | աքլոր |
| Չայիր | դալար |
| Չարչար գրողնին | չարչարողները, լացացնողները |
| Չիման | դալար |
| Չին | Չինաստան, չինական |
| Չիֆթ | զույգ |
| Չոլ | դաշտ |
| Չոլի կռունկ | վայրի կռունկ |
| Պա̈լա̈սան | բալասան (բսբ.) |
| Պագ, պաք | համբյուր |
| Պալիքիմ | թերևս |
| Պառկէյանք | պառկեինք |
| Պեքիր, բաքըր | եզդ.՝ արական անձնանուն |
| Պըտուկ | ծիլ, ծիլեր |
| Պիթուն | բոլոր, ամբողջ |
| Պիլպիլ, պյուլպյուլ, բլբուլ | սոխակ |
| Պոլորել | բոլորել (ճյուղն ու թուփը ծածկվեց ծաղիկներով) |
| Պրոն | ծամկալ, ծամթել |

| | |
|---|---|
| Պրաբեոն, պրապեոն | բրաբեոն (բսբ.) |
| **Ջ**ղա | փոքրիկ եղեգնյա խաչ, մետաքսե թելերով զարդարված, նորափեսայի հանդերձանքի կարևոր պարագա |
| **Ս**ամի | բեռ |
| Սալամ | կաքավների ցեղին պատկանող թռչուն |
| Սանամ | մոլախոտ, թունավոր խոտ (могильник, родапит) |
| Սաֆսար | աղվես (պրսկ. հայ.) |
| Սըրմա | ոսկեթել (թրք.) |
| Սիլա | հայրենիք |
| Սինամոն, սիմամոն հավք | սիրամարգ |
| Սիրագան | սիրելի |
| Սիրեկ (սարեկ) | սարյակ |
| Սուլուլ | սուր և երկար |
| Սույրաթ (թրք.) | նաբաթ, վանաշաքար (леденец) |
| Սուրու (տաճկ.՝ sürü, süri) | ոչխարների հոտ |
| Սօր | այսօր |
| **Վ**առեկ | հավձագ, ճուտ, դեռահաս աղջիկ (9-12 տ.), հարս |
| Վէլվէլէ շալ | պսպղուն, փայլուն շալ |
| Վըլա | լվա |
| Վո՞ւր Է | ո՞ւր է |
| **Տ**ամաթ | կապագ |
| Տանտըկին | տան տիկին |
| Տառոս, տարոսը | պսակի արժանանալ, տարը (թրք.)՝ եգիպտացորեն, որը պարտադիր շաղ էին տալիս նորապսակների գլխին, այստեղից էլ «տարոսը քեզ» դարձվածքը: |
| Տար, տա̈ր | բարձունք |
| Տիհան | այնտեղ |
| Տխեր ա | թխել է |
| **Փ**արվեզ տալ | ման գալ, զբոսնել |
| Փերչամ, փերջամ | մազափունջ |
| **Ք**ասէդ | ամանդ (պնակ) |
| Քեմենչեջի | քամանչահար, երաժիշտ |
| Քըռի | Քուռ գետը |
| Քյասուլիկ | գեղեցիկ |
| Քողա | անկյուն |
| Քոշ | քաղ, նոխազ, այծ |
| Քոչ | ոչխար, ոչխարների գոմ |
| **Օ**վա | դաշտ (չմշկ.) |
| Օքմի | ոմն մեկը |